

ISSN 1829-2984

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

**ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ  
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ**

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

**КРИЗИСНОЕ УПРАВЛЕНИЕ И ТЕХНОЛОГИИ**

НАУЧНЫЙ ЖУРНАЛ

**CRISIS MANAGEMENT AND TECHNOLOGIES**

SCIENTIFIC JOURNAL

**No 1 (22)**

**ԵՐԵՎԱՆ**

**ЕРЕВАН**

**YEREVAN**

**2023**

**Երաշխավորված է տպագրության Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի  
նախարարության Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի գիտական խորհրդի  
կողմից**

Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ: Գիտ. հանդես. - Եր.:  
ՀՀ ՆԳՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ,  
2023. - 218 էջ:

**ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**  
**ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ**

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Գլխավոր խմբագիր՝ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Հ.Շ.**

**Գլխավոր խմբագրի տեղակալ՝ ՂԱՐԻԲՅԱՆ Հ.Պ.**

**Պատասխանատու քարտուղար՝ ԿՐԲԵԿՅԱՆ Վ.Գ.**

<b>ԱԹԱԲԵԿՅԱՆ Ռ.Ա.</b>	Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<b>ԱԼԱՎԵՐԴՅԱՆ Գ.Շ.</b>	Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<b>ԴԱՎԹՅԱՆ Վ.Ս.</b>	Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<b>ՂԱՄԲԱՐՅԱՆ Ա.Ս.</b>	Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<b>ՄԿՐՏՉՅԱՆ Մ.Ա.</b>	Մանկավարժական գիտությունների դոկտոր, դոցենտ
<b>ՄՈՒՐԱՎՅՈՎԱ Ե.Վ.</b>	Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<b>ՆԱԶԱՐԵԹՅԱՆ Ս.Ն.</b>	Երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<b>ՆԱՐԻՄԱՆՅԱՆ Մ.Զ.</b>	Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<b>ՊԵՏՐՈՍՅԱՆ Հ.Հ.</b>	Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<b>ՊՈԿՐՈՎԱԿԱՅԱ Ն.Ն.</b>	Սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<b>ՍԱՀԱԿՅԱՆ Ա.Կ.</b>	Սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<b>ՍԱՀՐԱԴՅԱՆ Ա.Ի.</b>	Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<b>ՍՈԿՈԼՈՎԱԿԻ Մ.</b>	Սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<b>ՎԱՐԴԱՆՅԱՆ Կ.Ե.</b>	Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<b>ՔՈՉԱՐՅԱՆ Տ.Տ.</b>	Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<b>ՕՐԴՅԱՆ Է.Հ.</b>	Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
<b>ԲԱԳԻՅԱՆ Վ.Ա.</b>	Կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
<b>ԳՍՊՈՅԱՆ Գ.Մ.</b>	Աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ
<b>ԽԱՉԱՏՐՅԱՆ Գ.Հ.</b>	Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
<b>ԽՈՆԴԿԱՐՅԱՆ Վ.Ս.</b>	Երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածու
<b>ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.Ռ.</b>	Քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ
<b>ՇԻՎԱԿՈՒ Ք.</b>	Գլոբալ միջավայրի գիտությունների թեկնածու

**ГОСУДАРСТВЕННАЯ АКАДЕМИЯ КРИЗИСНОГО УПРАВЛЕНИЯ  
КРИЗИСНОЕ УПРАВЛЕНИЕ И ТЕХНОЛОГИИ  
РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ**

**Главный редактор - Матевосян Г.Ш.**

**Заместитель главного редактора - Карибян А.П.**

**Ответственный секретарь - Крбемян В.Г.**

<b>АЛАВЕРДЯН Г.Ш.</b>	Доктор технических наук, профессор
<b>АТАБЕКЯН Р.А.</b>	Доктор технических наук, профессор
<b>ВАРДАНЯН К.Е.</b>	Доктор психологических наук, профессор
<b>ГАМБАРЯН А.С.</b>	Доктор юридических наук, профессор
<b>ДАВТЯН В.С.</b>	Доктор политических наук, профессор
<b>КОЧАРЯН Т.Т.</b>	Доктор политических наук, профессор
<b>МКРТЧЯН М.А.</b>	Доктор педагогических наук, доцент
<b>МУРАВЬЕВА Е.В.</b>	Доктор педагогических наук, профессор
<b>НАЗАРЕТЯН С.Н.</b>	Доктор геологических наук, профессор
<b>НАРИМАНЯН М.З.</b>	Доктор медицинских наук, профессор
<b>ОРДЯН Э.А.</b>	Доктор экономических наук, профессор
<b>ПЕТРОСЯН Г.А.</b>	Доктор педагогических наук, профессор
<b>ПОКРОВСКАЯ Н.Н.</b>	Доктор социологических наук, профессор
<b>СААКЯН А.К.</b>	Доктор социологических наук, профессор
<b>САГРАДЯН А.И.</b>	Доктор технических наук, профессор
<b>СОКОЛОВСКИ М.</b>	Доктор социологических наук, профессор
<b>АРУТЮНЯН А.Р.</b>	Кандидат политических наук, доцент
<b>БАГИЯН В.А.</b>	Кандидат биологических наук, доцент
<b>ГСПОЯН Г.М.</b>	Кандидат географических наук, доцент
<b>ХАЧАТРЯН Г.Г.</b>	Кандидат экономических наук, доцент
<b>ХОНДКАРЯН В.С.</b>	Кандидат геолого-минералогических наук
<b>ШИВАКУ К.</b>	Кандидат наук глобальной среды

**CRISIS MANAGEMENT STATE ACADEMY  
CRISIS MANAGEMENT AND TECHNOLOGIES  
EDITORIAL COUNCIL**

**Editor-in-chief – Matevosyan H.Sh.**

**Editor-in-chief deputies– Gharibyan H.P.**

**Responsible secretary – Krbekyan V.G.**

<b>ALAVERDYAN G.SH.</b>	Doktor of tech. sci., professor
<b>ATABEKYAN R.A.</b>	Doktor of tech. sci., professor
<b>DAVTYAN V.S.</b>	Doctor of polit. sci., professor
<b>GHAMBARYAN A.S.</b>	Doctor of jurid. sci., professor
<b>KOCHARYAN T.T.</b>	Doctor of polit. sci., professor
<b>МКРТЧЯН М.А.</b>	Doktor of ped. sci., docent
<b>MURAVEVA Y.V.</b>	Doktor of ped. sci., professor
<b>NARIMANYAN M.Z.</b>	Doktor of medic. sci., professor
<b>NAZARETYAN S.N.</b>	Doktor of geol. Sci., professor
<b>ORDYAN E.A.</b>	Doktor of econ. sci., professor
<b>PETROSYAN H.H.</b>	Doktor of ped. sci., professor
<b>POKROVSKAYA N.N.</b>	Doktor of soc. sci., professor
<b>SAHAKYAN A.K.</b>	Doktor of soc. sci., professor
<b>SAHRADYAN A.I.</b>	Doktor of tech. sci., professor
<b>SOKOLOVSKI M.</b>	Doktor of soc. sci., professor
<b>VARDANYAN K.E.</b>	Doktor psych. sci., professor
<b>BAGIYAN V.A.</b>	PhD, biol.sci., docent
<b>GSPOYAN G.M.</b>	PhD, geog. sci., docent
<b>HARUTYUNYAN A.R.</b>	PhD, polit. sci., docent
<b>KHACHATRYAN G.H.</b>	PhD. econ. sci., docent
<b>KHONDKARYAN V.S.</b>	PhD, geol.-minerol. sci.
<b>SHIWAKU K.</b>	PhD, global environment

ISSN 1829-2984  
ISSN 1829-2984

© КРИЗИСНОЕ УПРАВЛЕНИЕ И ТЕХНОЛОГИИ, 2023  
© CRISIS MANAGEMENT AND TECHNOLOGIES, 2023



ՀՏԴ 351/354

I. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հ.Շ. Մաթևոսյան, Ա.Ա. Հայրապետյան, Կ.Է. Զիրաքյան, Հ.Պ. Ղարիբյան,  
Գ.Մ. Գսպոյան, Հ.Ս. Ամիրխանյան, Լ.Ա. Նազարյան

**ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՊԱՅԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ**

Հոդվածի նպատակն է ներկայացնել ժամանակակից փրկարարական ծառայության սպային բնութագրող հատկանիշների ձևավորման հայեցակարգային մի շարք հարցեր, այդ թվում՝ գիտելիքների, ունակությունների, հմտությունների և վարքագծի նորմերի այն ամբողջությունը, որն անհրաժեշտ է սպային, որպես առաջնորդի, իր գործառույթների արդյունավետ իրականացման համար, հատկապես թիմային աշխատանքներում ինքնակառավարման գործառույթների և մեթոդների իմացություն և դրանց կիրառման կարողություն:

Հիմնավորված է փրկարար սպային բնութագրող հատկանիշների ամբողջությունն ու սպայի ձևավորման ուղին:

**Առանցքային բառեր.** փրկարարական ծառայության սպա, առաջնորդ, պատիվ, խիզախ, քաջ, անձնվեր, բարեկիրթ, բարեխիղճ, հավատարիմ, օբյեկտիվ, սպայի ձևավորման ուղի:

Չկա ավելի պատվաբեր առաքելություն, քան սպա լինելը՝ պատվի կրողն ու պաշտպանողը:

Փրկարար սպան գաղափարական մասնագիտություն է, որի հիմքը փրկարարի վեհ կոչումն է:

Արտաքին և ներքին սպառնալիքները կանխելու, կանխարգելելու և հաղթահարելու առաքելությամբ կառույցներում երկրի անվտանգության ապահովման գործին պետք է լծվեն լավագույնները, ճգնաժամային իրավիճակներում **երկիրը, մարդկանց կյանքն ու ունեցվածքը փրկելու որոշում կայացնելու ունակ, համարձակ, խիզախ, անձնվեր, պատվախնդիր առաջնորդները՝ ՍՊԱՆԵՐԸ:**

Միայն հստակ համոզմունքի, ապագային միտված ծրագրերի իրականացման հնարավորություն ունենալու հավաստի, հուսալի և իրական տեղեկատվական միջավայրում կարող են անխափան գործել հանրության, որպես կենդանի օրգանիզմի, բոլոր համակարգերը՝ գրանցելով աճ և բարգավաճում, արդիական հեռանկարներ:

Սպայի պատիվը բարձրագույն հոգևոր արժեք է: Պատիվն անձնուրաց, քաջարի ծառայության մեջ է՝ հանուն պետական բարձրագույն շահերի և երկրի ընդհանուր բարօրության: Այն արտահայտվում է նվիրվածությամբ, անսասան քաջությամբ, ճշմարտացիությամբ, ազնվությամբ և համեստությամբ [13, 22, 23, 24]:

Սպայի պատիվը ձևավորվում է վաղ տարիքից, նրան ուղեկցում կյանքի ողջ ընթացքում՝ հենվելով նրա բարեկրթության, բարեխղճության, հավատարմության, օբյեկտիվության, ժուժ-

կալության (խելամտություն, լրջություն, սթափություն), մասնագիտական և այլ կարողությունների վրա, որոնք նրան բերում են անբասիր հեղինակություն և շնորհում առաջնորդի դեր:

**Առաջնորդ՝** որևէ խմբում մեծ հեղինակություն ունեցող անձ, որը վստահություն է ներշնչում խմբի անդամներին, ուղղորդում նրանց գործողությունները՝ իրականացնելով կառավարչական գործընթաց [8, 17, 18, 19]:

**Փրկարար սպան, որպես առաջնորդ՝**

1. զերծ է մնում այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որը կարող է ընկալվել որպես անօրինականության խրախուսում կամ դրա նկատմամբ հանդուրժողականություն կամ անհարգալից վերաբերմունք օրինավոր վարքագծի նկատմամբ,
2. իր վարքագծով օրինակ է ծառայում և անձամբ պահպանում է վարքագծի այն պահանջները, որոնք ակնկալում է մյուսներից,
3. հստակորեն տիրապետում է փրկարար ծառայության գործունեության նպատակներին, դրանց մասին պատշաճ տեղեկացնում է իրեն ենթակա փրկարարական ծառայողներին,
4. ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում պաշտպանում է իրեն ենթակա փրկարարական ծառայողների և այլ աշխատակիցների օրինական շահերը՝ միջամտելով նրանց հանդեպ ոտնձգության կամ այլ անարդար վերաբերմունքի ցանկացած դրսևորման դեպքում [16],
5. իր լիազորություններն իրականացնում է զգայունություն ցուցաբերելով ենթակա փրկարարական ծառայողների և աշխատակիցների կարիքների նկատմամբ,
6. ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում ենթականերին զերծ է պահում ոչ հիմնավոր գործողություններ կատարելուց կամ որոշումներ ընդունելուց, բացառում է իր կողմից խտրական վարքագծի դրսևորումը, ինչպես նաև վերադասության լիազորության չարաշահումը:

**Բարեկրթություն՝** սպայի մասնագիտական ու անձնային հատկությունների համախմբություն փրկարարական աշխատանքների կատարման խնդիրների լուծմանն ուղղված նրա պատրաստականության ու կարողության աստիճանը (արհեստավարժություն, արձագանքման օպերատիվություն, նախաձեռնողականություն, կատարողականություն և այլն) [5, 14, 17, 18]:

**Բարեկրթության տեսանկյունից փրկարար սպան՝**

1. ցանկացած իրավիճակում ցուցաբերում է զսպվածություն, հավասարակշռվածություն և հարգալիրություն,
2. գործընկերների հետ հարաբերություններում դրսևորում է նրբանկատություն,
3. ձայնը չի բարձրացնում ծառայության վայրում, ծառայակցի վերաբերյալ քննադատություն արտահայտում է միայն նրա ներկայությամբ՝ պարզաբանելով բոլոր հիմքերը,
4. զերծ է մնում արտոնյալ վերաբերմունք դրսևորելուց որևէ մեկի նկատմամբ՝ պայմանավորված փրկարար ծառայության համակարգում այդ անձի ունեցած պաշտոնով,
5. բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, չի գործադրում ֆիզիկական ուժ կամ դրա վերաբերյալ սպառնալիք չի ներկայացնում, ինչպես նաև չի գործադրում հոգեբանական բռնություն և այլ սպառնալիքներ չի ներկայացնում:

**Քարեխղճություն՝** ջանասեր, ուշիմ, արդարամիտ, իր պարտականություններն ազնվորեն և պարտաճանաչ կատարող անձի հատկություն [17, 18, 24]:

**Փրկարար սպան** [1, 2, 3, 10]՝

1. իրեն վերապահված լիազորությունների, կարողությունների և իրավասության շրջանակներում պարտականությունները կատարում է ջանասիրությամբ նվիրվածությամբ և առավելագույն արդյունավետությամբ,
2. բարեխղճորեն պահպանում է ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած՝ օրենքով պահպանվող տեղեկություններ պարունակող փաստաթղթերի և նյութերի հետ աշխատելու՝ օրենսդրությամբ սահմանված պահանջները,
3. այլ նպատակներով չի օգտագործում, չի հրապարակում կամ այլ կերպ մատչելի չի դարձնում (այդ թվում՝ ծառայությունից ազատվելուց հետո) ծառայողական պարտականությունների իրականացման կապակցությամբ իրեն հայտնի դարձած ոչ հրապարակային տեղեկությունները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, իսկ նման տեղեկությունները երրորդ անձանց հասանելի դառնալու դեպքում՝ անմիջապես պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր տեղեկացնում է իր վերադաս անձին, անմիջական ղեկավարին կամ գաղտնի տեղեկությունների պահպանությունն իրականացնող ստորաբաժանման ղեկավարին,
4. գաղտնիության, անձնական տվյալների պաշտպանության և անվտանգության կանոնները պահպանելով՝ պատշաճ կերպով մշակում է և տնօրինում ծառայողական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված իր տնօրինության տակ հայտնված տվյալները, տեղեկությունները, գաղտնաբառերը և այլն,
5. ձեռնպահ է մնում իր լիազորությունների կատարման հետ չառնչվող պետական կամ ծառայողական գաղտնիքի տեղեկակիրներին, տեղեկություններին, գաղտնաբառերին կամ հատուկ պահպանվող տարածքներին հասանելիություն ստանալուն ուղղված քայլերի ձեռնարկումից, ինչպես նաև առանց թույլտվության դրանց տեղեկակիրների պատճենահանումից, ծայնագրումից, լուսանկարումից կամ տեսագրումից,
6. իր աշխատանքային և պաշտոնական պարտականություններից չբխող հետազոտություններում կամ աշխատություններում չի օգտագործում այնպիսի տեղեկություններ, որոնք, թեև ենթակա են հրապարակման, սակայն դեռևս չեն հրապարակվել իշխանության տվյալ մարմնի կողմից,
7. իր գործունեության համար տրամադրված ռեսուրսները և այլ գույքն օգտագործում է միայն ծառայողական նպատակներով և խնայողաբար,
8. ռեսուրսները, այդ թվում՝ այլ ծառայողների աշխատաժամանակը, չի օգտագործում սեփական շահերը բավարարելու կամ այլ անձնական նպատակներով,
9. իր աշխատաժամանակը չի օգտագործում իր պաշտոնական լիազորություններից դուրս այլ գործողություններ կատարելու համար, եթե կիրառելի նորմերին համապատասխան այլ բան չի համաձայնեցվել իր վերադաս անձի կամ անմիջական ղեկավարի հետ,

10. իր պարտականությունները կատարելիս դրսևորում է քաղաքական զսպվածություն և չեզոքություն, այդ թվում՝ հրապարակայնորեն չի արտահայտում իր քաղաքական տեսակետները, ձեռնպահ է մնում այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որը կարող է քաղաքական գործունեությամբ զբաղվելու տպավորություն ստեղծել,
11. իր ծառայողական պարտականությունները կատարելիս չի դրսևորում հովանավորչություն որևէ կուսակցության, քաղաքական կազմակերպության կամ շարժման նկատմամբ,
12. իր պարտականությունները կատարելիս չի կատարում քաղաքական շահը սպասարկող քայլեր կամ ներգրավվում դրանց պաշտպանության մեջ, չի կատարում նման գործունեության համար միջոցներ տրամադրելու պահանջները, ինչպես նաև նման պահանջներ չի ներկայացնում այլ ծառայողների,
13. զերծ է մնում քաղաքական բնույթի հանրային ելույթներ ունենալուց, քաղաքական կողմնորոշում ունեցող հոդվածներ հրապարակելուց կամ սոցիալական էջերում քաղաքական որևէ կուսակցության օգտին կամ դրա դեմ գրառումներ կատարելուց, նմանատիպ գրառումներ հավանելուց կամ տարածելուց:

**Հավատարմություն՝** իր հարաբերություններում, պարտականությունների ու պարտքի կատարման ընթացքում անձի կայունության և հուսալիության հատկություն [17, 18, 23]:

Փրկարար սպան զերծ է մնում այնպիսի պահվածքից, որը կարող է կասկածի տակ դնել փրկարարի պարտականությունները բարեխղճորեն իրականացնելու փաստը, ինչպես նաև խուսափում է կոնֆլիկտային իրավիճակներից, որոնք կարող են վնաս հասցնել իր համբավին կամ փրկարար ծառայության հեղինակությանը [1, 3]:

**Փրկարար սպան՝**

1. փրկարար ծառայության հեղինակությունը պահպանելու հարցում լինում է հետևողական, բացահայտում է և հնարավորինս վերացնում իր և այլ փրկարարական ծառայողների կողմից թույլ տրված սխալները և բացթողումները:
2. իր ծառայության գործունեության և այլ ոլորտներում առկա հանգամանքների վերաբերյալ քննադատական մտահոգություններ արտահայտելիս լինում է հարգալից և զուսպ:
3. խուսափում է փրկարար ծառայությունը վարկաբեկելուց կամ նսեմացնելուց:
4. չի օգտագործում ունեցած դիրքն իր, այլ անձանց կամ մասնավոր կազմակերպությունների նկատմամբ արտոնություններ, բացառություններ և նպաստավոր այլ պայմաններ ստեղծելու համար [14]:

**Օբյեկտիվություն՝** անձի փրկարարական աշխատանքների կազմակերպման ու ղեկավարման գործընթացներում անաչառություն, անկանխակալություն, անկողմնակալություն դրսևորելու և խտրականության ու հովանավորչության բացառման հատկություն [17, 19]:

**Օբյեկտիվության տեսանկյունից փրկարար սպան [6, 7]՝**

1. իր ծառայողական պարտականություններն իրականացնելիս դրսևորում է անաչառություն, զերծ է մնում խոսքով կամ վարքագծով կողմնակալություն ցուցաբերելուց, գործում է այնպես, որ իր անկողմնակալության նկատմամբ անհարկի կասկած չհարուցվի կամ ողջամտորեն այդպիսի տպավորություն չստեղծի, չի առաջնորդվում ենթադրություններով, հույզերով, անձնական վերաբերմունքով և այլ կողմնակի ազդեցությամբ,

2. բացառում է խտրական վերաբերմունքի դրսևորումը որևէ կազմակերպության, խմբի կամ անհատի նկատմամբ՝ կապված նրա սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնության պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից,
3. իր գործընկերների հետ հարաբերվելիս՝ մասնագիտական աջակցության, կարողությունների զարգացման, կատարողականի գնահատման, առաջխաղացման և աշխատանքային հարաբերություններից բխող այլ գործողություններում, ցուցաբերում է հավասար վերաբերմունք:


**Կարողունակություն՝** գիտելիքների, ունակությունների, հմտությունների և վարքագծի ամբողջություն, որն անհրաժեշտ է պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթների արդյունավետ իրականացման համար [9, 11, 12, 20, 21]:

**Փրկարար սպան ունի՝**

1. առողջ ապրելակերպի և ֆիզիկական կուլտուրայի նորմերի իմացության և պահպանման կարողություն,
2. մշակույթի, գիտության, արտադրության արժեքների ըմբռնման, դրանց արդյունավետ օգտագործման ունակություն,
3. առաջադրված նպատակների իրականացման աշխատանքը կազմակերպելու ունակություն, նորարարական գաղափարների օգտագործման պատրաստակամություն և կարողություն,
4. ճանաչողական գործունեության կարողություն,
5. հիմնական ծրագրային միջոցներն օգտագործելու, գլոբալ տեղեկատվական պաշարներից օգտվելու ունակություն, ժամանակակից հեռահաղորդակցության միջոցների տիրապետում, տարբեր աղբյուրներից տեղեկատվության հետ աշխատելու հմտություններն օգտագործելու ունակություն,
6. տեխնիկական միջոցների և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ունակություն, տեղեկատվական շտեմարանների ձևավորման կարողություն,
7. մասնագիտական գործունեության սկզբունքների, մեթոդների և եղանակների իմացություն, պլանավորման, իրագործման և արդյունքների գնահատման գործընթացներում դրանց կիրառման կարողություն,
8. առաջադրված խնդիրների լուծման համար աշխատանքային թիմի ձևավորման պատրաստակամություն և կարողություն,
9. ընթացիկ և օպերատիվ վերահսկողության համակարգերի մշակման, գործունեության տարբեր ոլորտներում գործընթացների կառավարման ժամանակակից մեթոդների և սկզբունքների տիրապետման և կիրառման կարողություն,
10. թիմային աշխատանքներում ինքնակառավարման գործառույթների և մեթոդների իմացություն և դրանց կիրառման կարողություն:

Կառավարման ցանկացած մակարդակում, ցանկացած շրջայում, կազմակերպական բջիջում պահանջվում են որոշակի գիտելիք, կարողություն և հմտություն ունեցող, որոշակի գաղափարախոսություն, բարոյահոգեբանական, հոգևոր արժեքներ կրող, հանրությանն ընկալելի և ընդունելի ազգային նկարագիր ու վարքագիծ ունեցող անձինք, առավել ևս՝ սպաներ: Փրկարար սպային բնութագրող հատկանիշների ամբողջությունը բերված է նկ. 1-ում:

Ինչպես երևում է նկ. 1-ից, փրկարար սպայի յուրաքանչյուր հատկանիշ իր հերթին բաղկացած է մի շարք այլ հատկանիշներից, որոնք էլ իրենց հերթին՝ այլ հատկանիշներից: Այդպիսի բազմաբնույթ և բազմաթիվ հատկանիշների ձևավորումը չի կարող լինել որևէ կառույցի մենաշնորհ: Այն սերտորեն կապված է միջավայրի առանձնահատկությունների հետ, այն միջավայրի, որում ձևավորվում է անձը:




**Նկ. 1. Փրկարար սպային բնութագրող հատկանիշներ**

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ հասարակության բնականոն զարգացումն ապահովվում է, եթե վերը բերված հատկանիշները, վարքագծի նորմերը տարալուծված և շաղկապված են յուրաքանչյուրի մեջ վաղ մանկությունից, պարտադրանք չեն կամ միջոց՝ իշխելու, ազդեցության շահեկան լծակների տիրապետելու համար: Ավելին, փրկարար սպայի հատկանիշների զարգացումը պետք է կրի մշտական բնույթ և նա պետք է գործի գերազանցելիության սկզբունքով՝ մշտապես գերազանցի ինքն իրեն: Փրկարար սպայի ձևավորման վերոգրյալ հայեցակարգային մոտեցումների իրականացման ընդհանուր ուղին բերված է նկ. 2-ում:

Համաձայն նկ. 2-ի, փրկարար սպայի ձևավորման ուղին բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝

1. քաղաքականություն մշակողները՝ ինչպես իշխանության մարմինները, այնպես էլ համապատասխան փորձագիտական հանրույթը, ներկայացնում են գաղափարախոսությունը և ոլորտի զարգացման հայեցակարգը,
2. անհրաժեշտ արդյունքին միտված հայեցակարգը ներկայացվում է համապատասխան ծրագրերով, մեթոդաբանությամբ և չափորոշիչներով,
3. Ուսումնական հաստատությունները, կրթարանները և փոխկապակցված կազմակերպություններն ապահովում են ծրագրերի ներդրումը,
4. Ուսումնական և կրթական միջավայրը բաղադրիչների և պայմանների ամբողջություն է, որը շրջապատում է սանին, ուսանողին, ներգործում նրա աշխարհայացքի, անհատականության և հանրության մեջ սեփական դերի գիտակցման ձևավորման վրա,
5. Ուսումնական հաստատությունների ուսումնադաստիարակչական գործընթացներում ներգրավված անձնակազմն իրականացնում է անընդհատ և շարունակական աշխատանք՝ յուրաքանչյուր փուլում պահանջվող համակողմանի գիտելիքների և ունակությունների մատուցմամբ և ապահովում դրանց յուրացումը գործնական եղանակով,
6. Համապատասխան կրթական ծրագիրն ավարտած անձինք ապագա սպայական ներուժն են, ովքեր գաղափարապես և հոգեբանորեն պատրաստ են ստանձնել հանրությանը ծառայելու առաքելությունը,
7. Հայեցակարգով նախասահմանված արդյունքը հանրության պահանջները բավարարող սպայակազմով համալրված ծառայությունն է, որն ուղղված է համընդհանուր բարօրության կերտմանը:



**Նկ. 2. Փրկարար սպայի ձևավորման ուղին**

Նկ. 2-ն արտացոլում է սերմնացանի և որոմների առականների խորհուրդը, որտեղ կարևորվում է **բարեբեր հողում բարի սերմ ցանելը և բարի բերքի ստացումը** (Մատթ. ԺԳ:1-8, 19-23, 24-30, 36-43):

Վերը նկարագրվող հայեցակարգային մոտեցումների իրականացումը պահանջում է անհրաժեշտ մեխանիզմների առկայություն և դրանց զարգացման ապահովում, ներառյալ սպայի՝ գերազանցելիության դարբնոցով անցնելիք կատարելագործման և ինքնակատարելագործման ուղին՝ համահունչ մնալով հասարակության պարուրածն զարգացմանը:

Պետք է փաստել, որ այն համահունչ է Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030թ-ը զարգացման պետական ծրագրին, որի համաձայն՝ **«Որակյալ կրթության արդյունավետ միջավայրի հասանելիությունը դառնում է առանձին մարդու կարողությունների զարգացման գլխավոր հարթակը, որն իր հերթին ապահովում է կրթության՝ իբրև հանրային բարիքի իրացման երաշխիքը»**: Իսկ Ծրագրի տեսլականի հիմքում Հայաստանի մինչև 2050 թվականի վերափոխման ռազմավարությունն ու հատկապես առաջին մեզանպատակն է՝ «գիտելիքի, մշակույթի, գիտակցության, հմտությունների համատարած, ներառական, նորարարական և հանրամատչելի զարգացման և յուրացման միջոցով **ունենալ քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ ու մրցունակ քաղաքացի, որի համար իրավունքների իրացումը նույնքան կարևոր է, որքան պարտականությունների կատարումը**, որն առաջին հերթին իրեն է համարում սեփական բարեկեցության և առողջության պատասխանատուն» [15]:

Այսպիսով, կարելի է նշել, որ հասարակության բնականոն զարգացումն ապահովվում է, եթե վերոգրյալ հատկանիշներն ու վարքագծի նորմերը յուրաքանչյուր անձի մեջ ձևավորվում են վաղ մանկությունից, ուղեկցում են նրան ողջ կյանքի ընթացքում և փաստել, որ փրկարարական ծառայության սպայի հատկանիշների զարգացումը պետք է լինի անընդհատ, մշտապես գերազանցի ինքն իրեն, այսինքն գործի գերազանցելիության սկզբունքով:

## Գրականություն

1. **«Փրկարար** ծառայության մասին» ՀՀ օրենք:
2. **«Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին»** ՀՀ օրենք:
3. **«Փրկարարական** ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենք:
4. **«Քաղաքացիական** ծառայության մասին» ՀՀ օրենք:
5. **Հանրային** ծառայության մասին ՀՀ օրենք:
6. **«ՀՀ զինված** ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենք:
7. **«ՀՀ զինված** ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենք:
8. **«Փրկարարական** կազմավորումների և փրկարարների որակավորման կարգն ու պայմանները հաստատելու մասին» 28 սեպտեմբերի 2006 թվականի N 1391-Ն ՀՀ կառավարության որոշում:
9. **«Փրկարար** ծառայության պաշտոն զբաղեցնելու մրցույթի անցկացման կարգը սահմանելու մասին» 23 հուլիսի 2020 թվականի N 1244-Ն ՀՀ կառավարության որոշում:
10. **«Քաղաքացիական** ծառայողների վարքագծի կանոնագիրք» 04 հոկտեմբերի 2022 թվականի N 697-Ն ՀՀ փոխվարչապետի որոշում:



11. **«Քաղաքացիական** ծառայության պաշտոնի գնահատման, դասակարգման, անվանումների, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի կազմման, պաշտոնների ընդհանուր համակարգում տեղակայման, իրավունքների և պարտականությունների, անվանացանկի վարման, ինչպես նաև տվյալ քաղաքացիական ծառայության պաշտոնը զբաղեցնելու համար քաղաքացիական ծառայողին մասնագիտական գիտելիքների ու կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներ սահմանելու մեթոդաբանությունը հաստատելու մասին» 11 հունվարի 2019 թվականի N 3-Ն ՀՀ առաջին փոխվարչապետի որոշում:
12. **ՀՀ փոխվարչապետի** 2019 թ. մարտի 20-ի N 102-Ն որոշմամբ հաստատված «Հանրային ծառայության պաշտոնների անձնագրեր կազմելու և անվանացանկ վարելու մեթոդաբանությունը»:
13. **2012թ-ի սեպտեմբերի 20-ի** «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի սպայի պատվի կանոնները հաստատելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի հրամանի հավելված:
14. **2022թ-ի հունիսի 17-ի** «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները սահմանելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի թիվ 01-Ն որոշում:
15. **ՀՀ օրենքը** Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին:
16. **Աթանեսյան Ա.Վ.**, Շաքարյան Ա.Կ., Ավետիքյան Վ.Հ., Ավետիսյան Ա.Ռ., Հարությունյան Դ.Կ., Զինվորական առաջնորդություն: Զինվորական կոլեկտիվի արդյունավետ կառավարման հիմնախնդիրները: Ձեռնարկ ՀՀ զինված ուժերի անձնակազմի համար, 2012. – էջ:
17. **Աղայան Է.Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան: Հայաստան 1976. – 1642 էջ:
18. **Ժամանակակից** Հայոց լեզվի բացատրական բառարան: Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ: Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Եր., 1969-1980. – 2763 էջ:
19. **«Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան»,** Եր: ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2015. – 1200 էջ:
20. **Ռազմական** սոցիոլոգիա: Ուսումնական նյութերի ժողովածու: Երևանի համալսարանի հրատարակչություն, Եր., 2005. - 232 էջ:
21. **«Հայտարարություն»,** Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կոմպետենցիաներ, 12.10. 2021 թ. մաս առաջին՝ ընդհանրական կոմպետենցիաներ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն, հեղինակներ՝ Լեսլի Սամոզին, Յոանկա Յակուբեկ-Լալիկ, Արտակ Ալոյան, Զենեթ Քայլի, Լիլիթ Հակոբյան [https://www.gov.am/am/announcements/item/346/?fbclid=IwAR2R1sYUnjm\\_Uld83hMhEani7o4uLGIvys\\_dTLZYvL4DMOoWUnACkcmep2KM](https://www.gov.am/am/announcements/item/346/?fbclid=IwAR2R1sYUnjm_Uld83hMhEani7o4uLGIvys_dTLZYvL4DMOoWUnACkcmep2KM) Դիտում՝ հունվար 2023թ.:
22. **Кодекс** чести российского офицера. военная литература, военная мысль. Դիտում՝ 11. 01. 2023.
23. **The Army Values** <https://www.army.mil/values/> Դիտում՝ 19.01.2023.
24. <https://www.jewishvirtuallibrary.org/ruach-tzahal-idf-code-of-ethics>. Դիտում՝ 17.01.2023.

Գ.Մ. Մատեոսյան, Ա.Ա. Այրապետյան, Կ.Յ. Յիրակյան, Ա.Ս. Կարիբյան,  
Գ.Մ. Գսպոյան, Ա.Ս. Ամիրխանյան, Լ.Ա. Նազարյան

## КОНЦЕПТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ ФОРМИРОВАНИЯ ХАРАКТЕРИСТИК ОФИЦЕРА СПАСАТЕЛЬНОЙ СЛУЖБЫ

*Цель статьи – представить ряд концептуальных вопросов формирования черт, характеризующих офицера современной спасательной службы, в том числе совокупность знаний, умений, навыков и норм поведения, которые необходимы офицеру как руководителю для эффективного выполнения своих функций, особенно функций и методов самоуправления, знание и умение их применять в коллективной работе.*

*Обоснована целостность качеств, характеризующих офицера-спасателя, и путь его формирования.*

**Ключевые слова:** *офицер спасательной службы, лидер, честь, смелый, отважный, преданный, вежливый, добросовестный, верный, объективный, путь подготовки офицера.*

H.Sh. Matevosyan, A.A. Hayrapetyan, K.E. Zirakyan, H.P. Gharibyan, G.M. Gspoyan,  
H.S. Amirkhanyan, L.A. Nazaryan

## CONCEPTUAL ISSUES ON THE FORMATION OF CHARACTERISTICS OF A RESCUE SERVICE OFFICER

*The purpose of the article is to present a number of conceptual issues of the formation of characteristics of the officer of the modern rescue service, including the set of knowledge, abilities, skills and norms of behavior that are necessary for the officer as a leader to effectively perform his functions, especially the functions and methods of self-management in team work, knowledge and ability to apply them.*

*The set of characteristics is discussed from the juridical, ideological and linguistic points of view, trying to outline the way of formation of an officer.*

**Key words:** *rescue service officer, leader, honor, brave, courageous, dedicated, polite, loyal, objective, officer training path.*

**Մաթևոսյան Համլետ Շմավոնի** – ռազմագիտության դոցենտ (ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ)։

**Հայրապետյան Արմինե Ալեքսանի** - Փ/Ծ գնդապետ (ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ)։

**Զիրաբյան Կարեն Էդուարդի** - Փ/Ծ գնդապետ (ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ)։

**Ղարիբյան Հայկանդուխտ Պապինի** – տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ (ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ)։

**Գսպոյան Գրիշա Մելիսակի** - աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ (ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ)։

**Ամիրխանյան Հասմիկ Սամվելի** - (ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ)։

**Նազարյան Լիլիթ Արմենի** – դասախոս (ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ)։

*Ներկայացման ամսաթիվը՝ 09.03.2023*

*Գրախոսման ամսաթիվը՝ 19.03.2023*

**В.С. Хондкарян**

## **ОПЕРАТИВНОЕ РЕАГИРОВАНИЕ ПРИ УГРОЗЕ АВАРИИ НА ПЛОТИНАХ**

*Оперативное реагирование определяется как начальный период действий при развивающейся или продолжающейся чрезвычайной ситуации, связанной с безопасностью плотин. Эффективный план действий в чрезвычайных ситуациях на плотинах с высокой потенциальной опасностью, является ключевым документом для предотвращения (сокращения) человеческих жертв и материального ущерба. Из-за меняющихся ниже по течению реки условий, обеспечение безопасности плотин должно быть непрерывным процессом. Планы должны регулярно пересматриваться и обновляться. Цель статьи в актуализации наиболее важных аспектов безопасности плотин и планов реагирования при чрезвычайной ситуации.*

**Ключевые слова:** авария, плотина, план, оповещение, эвакуация, оперативное реагирование.

Авария плотины может произойти из-за воздействия сил природы (землетрясения, оползни и др.), дефектов плотины, нарушения правил эксплуатации, а в военное время – как результат воздействия средств поражения. При аварии плотины образуется проран, через который изливается вода из верхнего бьефа в нижний, образуя волну прорыва. Масштаб чрезвычайной ситуации (ЧС) при аварии зависит от размеров и конфигурации прорана, объема водохранилища, высоты плотины, от топографических условий местности, и, конечно, от численности населения в зоне возможного затопления. Кроме вышеотмеченных факторов не меньшее значение имеет человеческий фактор подготовки к ЧС. По сравнению с информацией о физических характеристиках экстремальных ситуаций, сведения об особенностях реакции людей в таких условиях прогнозировать гораздо труднее. Большинство аварий плотин можно было бы избежать при условии мониторинга их технического состояния и наличия необходимой квалификации эксплуатирующего персонала. Поведенческие реакции в экстремальных ситуациях определяются параметрами личностного, социального и культурного характера, и в результате принимаемые решения в подобных условиях могут быть менее логичны, чем в спокойной обстановке. Подготовка к реагированию на ЧС имеет решающее значение.

Чрезвычайные ситуации, связанные с безопасностью плотин, часто характеризуются недостатком данных о состоянии плотины, неполным пониманием фактической серьезности угрозы разрушения, а также недостатком информации относительно потенциальных последствий. Как правило, это период неопределенности и замешательства, это критический момент, во время которого необходимо предпринять неотложные мероприятия. Современное законодательство и технические руководства по безопасности касаются необходимости разработки сценариев разрушения плотин, подготовки карт затопления, разработки мер гражданской обороны, в частности, планов реагирования на случай чрезвычайных ситуаций, включая системы предупреждения, оповещения и эвакуации.

Планирование аварийных ситуаций на плотинах, по сравнению с обеспечением структурной безопасности плотин, является новой задачей. Тем не менее, многие страны уже

имеют опыт планирования чрезвычайных ситуаций на плотинах, и существуют минимальные стандарты и критерии для разработки готовности к чрезвычайным ситуациям для плотин и территорий, расположенных ниже по течению реки. Каждая страна имеет свой подход к планированию аварийных ситуаций на плотинах, определяющий различные обязанности или различные способы распределения ответственности для всех субъектов, наиболее важными из которых являются собственник плотины, эксплуатационные службы, подразделения органов управления государственной системы предупреждения и действий в чрезвычайных ситуациях. Общепринятой практикой в мире является разделение плана действий в чрезвычайных ситуациях на пять компонентов [1]:

- ✓ мониторинг для выявления и оценки потенциальной аварийной ситуации;
- ✓ принятие решений по реагированию на событие;
- ✓ оповещение должностных лиц;
- ✓ предупреждение населения, подверженного риску затопления;
- ✓ эвакуация населения.

В целом, за первые три компонента отвечает владелец плотины, и это должно быть учтено в плане действий в чрезвычайных ситуациях (внутренний план действий в чрезвычайных ситуациях). Большое значение при угрозе аварий плотины имеет тесное взаимодействие владельца плотины и эксплуатационных служб с органом управления государственной системы предупреждения и действий в чрезвычайных ситуациях и органом государственного надзора. Важно, чтобы меры, которые необходимо предпринять, были подготовлены заранее. Должны быть подготовлены карты потенциально затопляемых территорий в случае прорыва плотины, позволяющие планировать эвакуацию населения из зоны затопления.

Стратегия действий в чрезвычайных ситуациях определяет три основных уровня опасности. Каждому уровню опасности присваиваются конкретные технические и эксплуатационные положения, а также регламентированные действия в аварийных ситуациях. В аварийной ситуации владелец плотины несет ответственность за мониторинг, определение соответствующих уровней опасности, отправку уведомлений, выполнение противоаварийных действий на плотине. Он также несет ответственность за немедленное уведомление властей, которые, в свою очередь, отвечают за предупреждение и эвакуацию населения. Основой для планирования эвакуации является картирование зоны затопления для наихудшего сценария, т. е. внезапного разрушения плотины. Кроме того, в результате такого анализа определяется время прихода водных потоков, их скорость и глубина. Безотлагательность ситуации является основным фактором при классификации серьезности инцидента. Различают следующие уровни:

➤ **внутреннее оповещение**, вызванное необычной ситуацией – может управляться и контролироваться персоналом плотины. Типичными сценариями внутреннего оповещения являются предупреждение об аномальных результатах мониторинга, когда показания некоторых приборов превышают предельно допустимые значения (например, пьезометрический напор или фильтрационный расход воды в дренажных сооружениях).

➤ **тревожная ситуация**, когда инцидент явно имеет тенденцию превращаться в серьезную угрозу для безопасности плотины и населения в зоне возможного затопления. На данном этапе еще неизвестно, удастся ли взять ситуацию под контроль. После первых неотложных мер в отношении безопасности населения, расположенного в зоне возможного затопления, следующим шагом является принятие решения о воздействии на ситуацию на самой плотине. Во многих случаях наиболее правильной реакцией может быть полное отсутствие немедленных действий, кроме – "участить наблюдения". Если состояние плотины оценивается как стабильное или "отступающее", то могут быть приняты корректирующие действия в виде различных вспомогательных мероприятий на плотине (усиление конструкций, ремонт и др.). Существует ряд действий, обычно используемых при попытке улучшить "живучесть" плотины в предаварийной ситуации, которые могут быть предприняты в зависимости от конкретных обстоятельств. Одним из наиболее используемых, но потенциально рискованных способов является быстрое снижение уровня водохранилища, путем создания дополнительного к уже существующему, аварийного водосброса. В нормальных условиях на это рискованное "мероприятие" требуется разрешение, однако в большинстве случаев обычные процедуры выдачи разрешений отменяются во время чрезвычайных ситуаций. Тем не менее, как правило, целесообразно уведомление соответствующих государственных регулирующих органов сразу после принятия соответствующих мер на плотине. После любого реагирования на плотине, следует проводить оценку и мониторинг, чтобы судить об успешности реагирования и определить необходимость дальнейших дополнительных действий.

➤ **неотложная ситуация**, когда стало ясно, что развитие инцидента или аварии нельзя остановить, и необходимо осуществить срочные меры по предупреждению и эвакуации населения, находящегося в зоне возможного затопления.

Рассмотрим подробнее вопросы раннего предупреждения и эвакуации. Мировой опыт свидетельствует о успехах в прогнозировании и предупреждении стихийных бедствий, таких как ураганы, цунами и торнадо, что позволяет заблаговременно предупреждать и ежегодно спасать миллионы жизней во всем мире. С течением времени продолжают улучшаться модели прогнозирования погоды, предоставляя более качественные данные и более точные прогнозы. Что касается ЧС связанных с безопасностью плотин, своевременное предупреждение и быстрое реагирование, без сомнения, критически важно. Главной задачей систем раннего предупреждения населения при аварии плотин, является сохранение человеческих жизней, с заблаговременной эвакуацией людей в зоне потенциального затопления. При аварии плотин, как правило, время на предупреждение и эвакуацию людей имеет решающее значение. В идеале при угрозе затопления территории в нижнем бьефе плотины, сообщение об инциденте, аварии должно оперативно поступать к лицам, принимающим решения. Анализ мирового опыта реагирования на аварии плотин показал наличие серьезных проблем, связанных с неполнотой информации необходимой для эффективного реагирования. Вопросы передачи информации при чрезвычайных ситуациях всегда находились в центре внимания международного сообщества. В отчете Национального совета по науке и технологиям США «Эффективные предупреждения о стихийных бедствиях» рекомендовалось разработать

стандартный метод для автоматического сбора и передачи всех типов предупреждений и отчетов об опасностях на местном, региональном и национальном уровнях [2]. В 2001 году международная независимая группа из более чем 120 менеджеров по чрезвычайным ситуациям, созданная в режиме онлайн калифорнийским экспертом по электросвязи в чрезвычайных ситуациях Артом Боттереллом, создала прототип структуры данных Common Alerting Protocol (CAP). Улучшение оповещения населения в ситуациях потенциального бедствия является основной целью стандарта CAP. В стандарте CAP решается важная задача координации механизмов распространения предупреждений и оповещений. Официальные оповещения в формате CAP о землетрясениях и вулканах во всем мире уже являются общедоступными.

Исследования показали, что люди обычно не действуют сразу по получении первого предупреждающего сообщения, а начинают искать подтверждение информации. Только убедившись, что предупреждение не является ложной тревогой, люди начинают принимать меры. Поэтому очень важно, чтобы использование формата CAP способствовало получению населением именно такого подтверждения в отношении предупреждений, поступающих по различным каналам. К сожалению, оповещение при аварии плотин в стандарте CAP в настоящее время не осуществляется, из-за целого ряда ограничений, связанных с вопросами диагностики состояния плотин, критериями безопасности, назначением предельно-допустимых показателей безопасности и вследствие вышеизложенных сложностей принятия решений. Система раннего предупреждения в случае аварии плотин должна быть тесно увязана с динамикой распространения разрушающего фронта водного потока. В зоне затопления можно выделить различные участки по опасности в зависимости от уровня воды, скорости и времени прихода фронта водного потока.

Обычно выделяют три зоны [3]:

- ✓ 15-минутная зона (обычно расположенная в 5-10 км от плотины), которая определяется как зона самоспасения, где должно быть предусмотрено оповещение населения с помощью звуковых сирен;
- ✓ зона тревоги I, где обязательно наличие аварийного плана для спасательных действий;
- ✓ зона тревоги II, где ущерб от затопления незначителен (не ожидается гибель людей). В этой зоне ответственность за оповещение населения может быть возложена на владельца плотины.

Системы предупреждения в целом можно разделить на следующие типы [4]:

- ✓ общественное оповещение с использованием звуковых систем (оповещение с помощью сирен и стационарных или мобильных громкоговорителей);
- ✓ личное, прямое оповещение по телефону, включая также оповещение "от двери к двери";
- ✓ передача новостей по телевидению или радиостанции.

В ряде стран предупреждение населения наиболее уязвимых районов, рассматривают как основную обязанность органов гражданской обороны и рекомендуют разделять ответственность, между владельцем плотины и органом гражданской обороны. Реагирование должно быть направлено на снижение потенциальных угроз для населения в первую очередь,

инфраструктуры ниже по течению реки и самой плотины в порядке убывания значимости [5]. Всегда следует помнить, что главная обязанность специалистов по безопасности плотин – защита человеческой жизни и она должна всегда превалировать над предотвращением повреждения плотины. Если ситуация на плотине оценивается как "неотложная ситуация", то население, находящееся в зоне возможного затопления должно быть немедленно эвакуировано.

Пожалуй, самое сложное решение для специалиста по безопасности плотин во время чрезвычайной ситуации – это рекомендовать или нет эвакуацию населения, когда еще нет полной уверенности в том, что плотина разрушится. Не существует единого подхода, которое можно было бы рекомендовать в такой ситуации, хотя всегда предпочтительнее выбрать сторону обеспечения безопасности населения. Материальные потери можно восстановить, потерянные жизни – нет. Эвакуация населения, включает комплекс мероприятий по организованному выводу населения из зоны чрезвычайной ситуации.

Организация эвакуации является самой важной из обязанностей государственного органа по чрезвычайным ситуациям во время аварии на плотине. Очевидна необходимость разработки эвакуационных планов для каждой плотины, хотя (как свидетельствует опыт аварий) эвакуация может начаться со стихийного перемещения людей до официального уведомления об эвакуации, и к этому также надо быть готовым. Эвакуационный план – это плод совместной работы владельца плотины, и специалистов по планированию чрезвычайных ситуаций. Часто информацией, представленной на карте ниже по течению от плотины (время, пиковый расход, высота волны, скорость), руководствоваться трудно, из-за излишне большой детальности карты и неопределенности (множественности) путей движения водных потоков, которые в подавляющем ряде случаев трансформируются в селевые потоки. Карты эвакуации необходимо максимально упростить, указывая только время, когда фронт водного потока достигнет определенных створов (участков) ниже по течению – другими словами, самым важным является время, в течение которого соответствующие службы должны эвакуировать людей, до прибытия разрушительных потоков воды. Это время измеряется от начала формирования прорана на плотине до того момента, когда волна паводка впервые достигнет определенного места зоны затопления.

Современный пример инцидента, связанного с безопасностью плотины, который потребовал предупреждения и эвакуации населения, – это инцидент с катастрофическим водосбросом на плотине Оровилл в феврале 2017 года. Хотя во время этого события не было человеческих жертв, анализ инцидента позволил высветить трудности, не позволившие сообществу правильно среагировать на инцидент, проведя своевременную эвакуацию населения из зоны возможного затопления. С момента возникновения угрозы разрушения плотины губернатор Калифорнии обратился к президенту США с просьбой направить силы и средства федерального уровня для ликвидации чрезвычайной ситуации, и в результате были приведены в готовность подразделения национальной гвардии штата. В Белом доме сообщили, что президент поручил координацию работ Агентству по управлению в чрезвычайных ситуациях. Кроме того, к работам подключилось и Министерство обороны страны: в

готовность были приведены в общей сложности более 20 тысяч военнослужащих. После появления информации департамента водных ресурсов Калифорнии об угрозе скорого прорыва плотины, власти штата приняли решение об эвакуации населения. Были вывезены (или выехали своим ходом) в общей сложности 188 тыс. человек из 7 городов, расположенных в зоне возможного затопления. На пути следования эвакуируемых наблюдались большие автомобильные пробки. Возникновение сложностей и паники на пути эвакуации населения, было обусловлено несогласованными заявлениями чиновников различных ведомств, в частности появлением информации о возможном разрушении плотины в считанные часы. Основной урок, который можно извлечь из опыта реагирования на плотине Оровилл, заключается в необходимости тщательной разработки мероприятий по защите населения, с учетом множества сложно прогнозируемых факторов во всех звеньях обеспечения безопасности населения в зоне возможного затопления.

### Литература

1. **ICOLD – Dam Safety Management: Operational Phase of the Dam Life Cycle.** Report submitted by ICOLD Committee on Dam Safety to the 79th Executive Meeting, May 2011.
2. **DATA NETWORKS, OPEN SYSTEM COMMUNICATIONS AND SECURITY,** Telecommunication security Common alerting protocol, CAP 1.1, 2000.
3. **Amdal T.,** The Norwegian Approach to and Guidelines for Risk Assessment. Dam Safety, Balkema, Rotterdam, 1998.
4. **Portuguese** Regulations for Safety of Dams, Decree-law nr.11/90, Lisbon, 1990.
5. **Federal** Emergency Management Agency, Mitigation Directorate, National Dam Safety Program: “Federal Guidelines for Dam Safety: Emergency Action Guidelines for Dam Owners; FEMA 64”, October 1998.

### Վ.Ս. Խոնդկարյան

## ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄԸ ՊԱՏՎԱՐՆԵՐՈՒՄ ՎԹԱՐԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ԴԵՊՔՈՒՄ

*Պատվարների անվտանգության ապահովման հետ կապված արագ արձագանքումը սահմանվում է որպես գործողությունների սկզբնական փուլ զարգացող կամ շարունակվող արտակարգ իրավիճակում: Հնարավոր բարձր վրանգ ներկայացնող պատվարներում առաջացող արտակարգ իրավիճակներում արդյունավետ գործողությունների պլանն առանցքային փաստաթուղթ է հանդիսանում մարդկային զոհերի և նյութական կորուստների կանխարգելման (նվազեցման) համար: Հնարավոր ջրածածկման գոտում պայմանների փոփոխության պատճառով պատվարի անվտանգության ապահովումը պետք է շարունակական գործընթաց լինի: Պլանները պետք է պարբերաբար վերանայվեն և թարմացվեն: Հողվածի նպատակն է արդիականացնել պատվարների անվտանգության և արտակարգ իրավիճակների արձագանքման պլանների կարևորագույն դրույթները:*

**Առանցքային բառեր.** վթար, պատվար, պլան, ազդարարում, փարհանում, արագ արձագանքում:



V.S. Khondkaryan

## OPERATIONAL RESPONSE TO THE RISK OF DAM ACCIDENTS

*Operational response is defined as the initial period of action during a developing or ongoing dam safety emergency. An effective emergency plan for dam emergencies with a high potential hazard is a key document for preventing (reducing) loss of life and property damage. Because of changing downstream conditions, dam safety should be an ongoing process. Plans should be reviewed and updated regularly. The purpose of this article is to update the most important aspects of dam safety and emergency response plans.*

**Key words:** *accident, dam, plan, notification, evacuation, prompt response.*

**Хондкарян Валерий Сергеевич** – кандидат геолого-минералогических наук, преподаватель (ГАКУ МВД РА, ТССЗ МВД РА).

*Дата представления: 14.03.2023*

*Дата рецензии: 22.03.2023*

Մ.Գ. Մանասյան Հ.Մ. Մանասյան

**ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հոդվածում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության բնակչության փարաբնակեցման հիմնական առանձնահատկությունները և միտումները, առկա հիմնախնդիրները, նշվում են դրանց լուծման գործում փարաբնակեցման գիտականորեն հիմնավորված քաղաքականության սկզբունքները, ուղղությունները և իրականացման մեխանիզմները: Հիմնավորվում է, որ ներկա ժամանակներում բնակչության փարաբնակեցման կարգավորման ժամանակ կարևոր նշանակություն է ստանում սահմանամերձ բնակավայրերի բնակչության անվտանգության ապահովումը և Հայաստանի Հանրապետության փարածքային ամբողջականության ամրապնդումը: Առանձնացվում են այն գործոններն ու պայմանները, որոնք պայմանավորում են փարաբնակեցման քաղաքականության նոր ուղղությունները: Դրանց հիման վրա առաջարկվում են փարաբնակեցման զարգացման 5 այլընտրանքային ռազմավարություններն ու դրանց իրականացման ուղիները:

**Առանցքային բառեր.** փարաբնակեցում, փարաբնակեցման համակարգ, փարածաշրջանային կենտրոն, տեղական կենտրոն, կայուն փարաբնակեցում, համայնքների խոշորացում, փարաբնակեցման քաղաքականություն, այլընտրանքային ռազմավարություններ:

ՀՀ-ում տեղի ունեցած քաղաքական, տնտեսական և սոցիալ-ժողովրդագրական տեղաշարժերը չեն կարող ազդեցություն չունենալ տարաբնակեցման կառուցվածքի և համակարգաստեղծ գործընթացների վրա: Սակայն, Հայաստանի տարաբնակեցման համակարգի (ՏՀ) ներկա միակենտրոն բնույթը և համակենտրոնացման առկա միտումները բոլորովին չեն բխում մեր երկրի քաղաքա-աշխարհագրական դիրքից և սոցիալ-տնտեսական զարգացման շահերից: Խորհրդային տարիներից ժառագայություն ստացած՝ բնակչության և բնակավայրերի գերկենտրոնացումը Երևանում և մերձերևանյան շրջաններում, ինչպես նաև բարձրլեռնային և սահմանամերձ գոտիների բնագրկումը շարունակվում էր նաև անկախության տարիներին: Դա խիստ անցանկանալի է ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև բնապահպանական և աշխարհաքաղաքական առումներով, և վտանգավոր՝ ռազմաքաղաքական տեսանկյունից:

Այլ կերպ ասած, տարաբնակեցման ներկա վիճակն ու արդի միտումները չեն համապատասխանում ՀՀ քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացման շահերին, և առաջանում է պետության կողմից միջամտության և դրա վերափոխման անհրաժեշտություն, որը նշանակում է գիտականորեն հիմնավորված տարաբնակեցման (էկիստիկական) քաղաքականության իրականացում:

Նախկինում կենտրոնացված-պլանային տնտեսության պայմաններում, երբ արտադրական ձեռնարկությունները, հողը, շինությունները պետական սեփականություն էին, բնակավայրերի և տարաբնակեցման զարգացման և տարածքային կազմակերպման հարցերն ըստ էության, լուծվում էին կենտրոնական մարմինների կողմից ստեղծված համապատասխան նախագծերի և սխեմաների (Հայաստանի տարաբնակեցման նախագիծ, շրջանային հատակագծման սխեմաներ, բնակավայրերի գլխավոր հատակագծեր) միջոցով: Դրանք երկարժամկետ

նախագծեր էին և զուգակցվում էին տարածքի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական զարգացման հեռանկարային ծրագրերի հետ: Սակայն, դրանք հաճախ չէին իրագործվում, քանի որ երկրի ճյուղային գերատեսչական կառավարումը չէր կարող իրականացնել իրենց էությամբ տարբեր կարգի տարածքային օբյեկտների (Հայաստանի ամբողջ տարածք, տարածաշրջան, բնակավայր) սոցիալ-տնտեսական համալիր զարգացումը: Բացակայում էին տարաբնակեցման քաղաքականության իրականացման ինստիտուցիոնալ և սոցիալ-տնտեսական անհրաժեշտ մեխանիզմներն ու գործիքները, մասնավորապես բացակայում էր տարածքային կառավարման համակարգը, իսկ տեղական ինքնակառավարման համակարգը ձևական բնույթ էր կրում:

Այսպես, Երևան քաղաքի աճի սահմանափակմանը և բարձրլեռնային ու սահմանամերձ բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման ակտիվացմանը նվիրված բազմաթիվ որոշումները և նախագծերը չէին իրագործվում, և արդյունքում մեծանում էին տարաբնակեցման տարածական և կառուցվածքային անհամամասնությունները: Բնակչությունը, արտադրությունը և սպասարկումը շարունակում էին կենտրոնանալ Երևանում, միևնույն ժամանակ բարձրլեռնային և սահմանամերձ գոտիներում վերանում էին տասնյակ գյուղեր:

Հարկ է նշել, որ թեև անկախության տարիներին տարաբնակեցման քաղաքականության իրականացման համար ստեղծվեցին որոշակի իրավաքաղաքական և տնտեսական մեխանիզմներ ու գործիքներ (հողային և քաղաքաշինական կադաստրեր, տարածքային կառավարման մարմիններ և այլն), սակայն այդ տարիներին մշակված և կառավարության կողմից 2003թ. հաստատված ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագիծը, բարձրլեռնային և սահմանամերձ գյուղական բնակավայրերի զարգացման վերաբերյալ ծրագրերն ու հայեցակարգերը դարձյալ չէին իրականանում, մնալով զուտ ցանկությունների մակարդակում [1]: Դա բացատրվում էր նրանով, որ դրանք գիտականորեն թույլ էին հիմնավորված, հաշվի չէին առնում երկրի տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական զարգացման միտումներն ու հեռանկարները, առկա ֆինանսական և նյութական ռեսուրսներն ու հնարավորությունները:

Տարաբնակեցման քաղաքականության ոչ արդյունավետ լինելը բացատրվում էր նաև նրանով, որ տարաբնակեցումը դիտվում էր ավանդական տարածական մոտեցմամբ, որպես որոշակի տարածքում տարբեր մեծություն և գործառույթներ իրականացնող բնակավայրերի ցանց, և հաշվի չէին առնվում տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացները, դրանց բնույթն ու ուղղվածությունը տարբեր տարածաշրջաններում: Տարաբնակեցումը դիտելով սուկ որպես տարածական գոյացություն և չբացահայտելով նրա ինքնազարգացման և ինքնակարգավորման գործընթացներն ու մեխանիզմները, փոփոխությունների միտումները՝ անհնար է ցանկացած մեծության տարածքային միավորի սահմաններում կատարել կանխատեսումներ, որոշել հեռանկարային տարաբնակեցումը: Մինչդեռ, տարաբնակեցման տարածաժամանակային վերլուծությունը, տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացների և զարգացման մեխանիզմների բացահայտումը իրական նախադրյալներ են ստեղծում տարաբնակեցման գիտականորեն հիմնավորված քաղաքականության իրականացման և ճիշտ կանխատեսումների համար:

Շուկայական տնտեսության, հողի և այլ արտադրության միջոցների մասնավոր սեփականության պայմաններում բոլորովին կիրառելի չեն տարաբնակեցման քաղաքականության մեջ

նախկինում ընդունված պլանային և դիրեկտիվային-նորմատիվային մոտեցումները: ՀՀ կառավարության կողմից հաստատված տարաբնակեցման նախագիծը չէր կարող տարաբնակեցման քաղաքականության իրական հիմք դառնալ, քանի որ տարաբնակեցման հեռանկարային զարգացումը հիմնականում կապվում էր տարածքային ռեսուրսների հնարավորությունների, ժողովրդագրական և էկոլոգիական տարողունակության հետ՝ արհամարհելով տարաբնակեցման սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքական գործոնների դերը, ինչպես նաև տարաբնակեցման ինքնակարգավորման և ինքնազարգացման հատկանիշները:

Մինչդեռ, Հայաստանի զարգացման ներկա փուլում փոխվում են տարաբնակեցման քաղաքականության նպատակների և սկզբունքների իրականացման մեխանիզմները: Իսկ որո՞նք են այն նոր պայմաններն ու գործոնները, որոնք թելադրում են տարաբնակեցման քաղաքականության նոր ուղղվածությունը.

1. համայնքների խոշորացումը, դրանց լիազորությունների մեծացումը տարածաշրջանային և տեղական խնդիրների լուծման հարցերում:
2. Շուկայական ազատ տնտեսության զարգացումը: Անշարժ գույքի (հող, բնակարան և այլն) սեփականության տարբեր ձևերի առկայությունը, դրանց շուկայի ձևավորումը:
3. Բնակավայրերի զարգացման սոցիալական գերակայությունների հաստատումը, բնակչության աղքատության և գործազրկության աստիճանական հաղթահարումը:
4. ՀՀ բնակչության զանգվածային արտագաղթը և աննպաստ ժողովրդագրական իրավիճակի ձևավորումը (ցածր ծնելիություն, բնակչության ծերացում և այլն):
5. Շրջակա միջավայրի պահպանության և էկոլոգիական հավասարակշռության ստեղծման անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով նոր պայմաններն ու գործոնները՝ անհրաժեշտ է մշակել մարդակենտրոն տարաբնակեցման քաղաքականություն, այսինքն քաղաքականության կենտրոնում պետք է լինի մարդը, նրա կենսագործունեության միջավայրի բարելավումը: Դա նշանակում է, որ ՀՀ բոլոր համայնքներում և բնակավայրերում անհրաժեշտ է ապահովել բնակչության ամենօրյա կենսագործունեության (աշխատանք, կենցաղ, հանգիստ) համար լիարժեք և նորմալ պայմաններ ու միջավայր՝ անկախ բնակավայրի դիրքից, մեծությունից և գործառույթների բնույթից: Այլ կերպ ասած՝ քաղաքականության կարևոր նպատակներից մեկը տարբեր կարգի տարաբնակեցման համակարգերի ձևավորումն է, որտեղ տարաբնակեցման տնտեսական, սոցիալական և բնապահպանական կողմերի հավասարակշռությունը հաստատվում է մարդու կենսագործունեության տարածաժամանակային արդյունավետ կազմակերպման և դրա ընթացքում առաջացած բազմապիսի պահանջունքների բավարարման տեսանկյունից:

ՀՀ տարաբնակեցման համակարգի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն դեռևս շատ հեռու է նման խնդիրներ լուծելուց: Ուստի անհրաժեշտ է շուտափույթ կերպով մշակել տարաբնակեցման ազգային նոր քաղաքականության հիմնական սկզբունքներն ու ուղղությունները [2, 3]: Հայաստանի տարաբնակեցման զարգացման հայեցակարգի հիմքում պետք է լինի ծրագրանպատակային մոտեցումը, երբ դրվում են որոշակի ռազմավարական նպատակներ և նշում դրանց հասնելու ուղիներն ու մեթոդները:

Մեր կարծիքով, Հայաստանի տարաբնակեցման վերափոխման հիմնական խնդիրը տարաբնակեցման այնպիսի համակարգի ստեղծումն է, որը կնպաստեր հետևյալ չորս նպատակ-

ների իրագործմանը.

- 1) անկախ բնակավայրերի մեծությունից և տիպից՝ պետք է ապահովվի մարդու բնականոն զարգացումը և նրա բազմապիսի պահանջմունքների բավարարումը տարբեր տեսակի ծառայություններով,
- 2) պետք է բարենպաստ պայմաններ ստեղծվեն տնտեսության զարգացման և արդյունավետ տարածքային կազմակերպման համար,
- 3) պետք է ստեղծվեն բնական միջավայրի պահպանման և էկոլոգիական վիճակի բարեփոխման երաշխիքներ,
- 4) պետք է ապահովվեն Հայաստանի տարածքային ամբողջականությունը և սահմանամերձ շրջանների բնակչության պաշտպանվածությունն ու անվտանգությանը:

Հասկանալի է, որ նշված նպատակների իրագործումը ենթադրում է տարաբնակեցման մեջ խոր և կառուցվածքային տեղաշարժեր: Հարցն ավելի է բարդանում նրանով, որ վերոհիշյալ նպատակների իրագործումը տարաբնակեցման գործընթացների մեջ կարող է առաջ բերել տարբեր, երբեմն միմյանց հակադիր միտումներ: Այսպես, բնակչության կենսապայմանների տարածքային տարբերությունների նվազեցման, բնակչության անվտանգության ապահովման, ինչպես նաև էկոլոգիական իրավիճակի բարեփոխման անհրաժեշտությունը տարաբնակեցման մեջ ավելացնում է ապակենտրոնացման միտումները, մինչդեռ մշակող արդյունաբերության և գիտության զարգացման և արդյունավետության բարձրացման շահերը հաճախ պահանջում են միջոցների կենտրոնացում ու բնակչության համակենտրոնացում:

Ներկա պայմաններում, մեր երկրի տարաբնակեցման քաղաքականության մեջ անհրաժեշտ է դրսևորել բազմատարբերակային մոտեցում: Դրանց օգտագործման դեպքում հարկավոր է հաշվի առնել ՀՀ ներկա տարաբնակեցման առանձնահատկությունները, միտումներն ու հիմնահարցերը: Դրանք են.

1. քաղաքային բնակչության բարձր մասնաբաժինը (2001թ.՝ 64.2%, 2020թ.՝ 63.9%) ՀՀ բնակչության ընդհանուր թվում, նրա նվազումն անկախության տարիներին [4]:
2. ՀՀ տարաբնակեցման համակարգի միակենտրոն բնույթը, անկախության տարիներին Երևանի բնակչության մասնաբաժնի շարունակվող աճը (2001թ.՝ 34.3%, 2020թ.՝ 36,6%): Բնակչության ներքին միգրացիան առավելապես միակենտրոն բնույթ է կրում, որի արդյունքում բնագրկվում են սահմանամերձ և բարձրլեռնային գոտիները:
3. Անկախության տարիներին բնակչության արտագաղթը թե՛ տարածական և թե՛ ժամանակային առումներով համատարած բնույթ է կրել, նվազել են գրեթե բոլոր բնակավայրերի բնակչության թվերը: Եթե անկախության առաջին երկու տասնամյակում ՀՀ-ից արտագաղթը մեծ չափերի էր հասնում քաղաքային բնակավայրերից, ապա վերջին տասնամյակում՝ գյուղական բնակավայրերից:
4. Առավել մեծ չափերով նվազել են լեռնային և սահմանամերձ մարզերի, հատկապես աղետի գոտում գտնվող Լոռու և Շիրակի մարզերի բնակչության թվերը: Լոռու մարզի բնակչության թիվը 2001-2020թթ. նվազել է 1.35 անգամ, իսկ Շիրակինը՝ 1.23 անգամ:
5. Քաղաքների համակարգում խիստ գերակշռում են փոքր քաղաքները (մինչև 20 հազ.), որը վկայում է քաղաքների համակարգի ոչ հասունության և պարզունակ կառուցվածքի

մասին:

6. Նախկինում բնակչության թվով առավել արագ աճող արդյունաբերական քաղաքները՝ Վանաձոր, Հրազդան, Չարենցավան, Ալավերդի, Ստեփանավան և այլն, անկախությունից հետո դարձան բնակչության թվի նվազման ամենաբարձր տեմպեր ունեցող քաղաքները:
7. Քաղաքային և գյուղական բնակչության ծնելիության ցածր մակարդակն ու նվազման միտումները: Բնակավայրերի մեծ մասում ազատ աշխատանքային ռեսուրսների առկայությունը:
8. Բնակչության և բնակավայրերի կուտակումը մերձերևանյան շրջանում: Անկախության տարիներին ըստ բարձրության գոտիների և Երևանից ունեցած հեռավորության մեծացման նվազել են բնակավայրերի և բնակչության մասնաբաժինները:
9. Սյունիքի, Վայոց Ձորի և Գեղարքունիքի մարզերի սահմանամերձ գոտիներում գերակշռում են փոքր գյուղական բնակավայրերը (մինչև 500 բն.): Վերջին տարիներին տարածքային և դիրքային կորստների արդյունքում, գյուղատնտեսական հողահանդակները միջգյուղական ճանապարհները և անմիջապես բնակավայրերը գտնվում են թշնամու անմիջական նշանառության տակ: Դրանք հանգեցնում են կենսագործունեության դժվարացմանը, իսկ առանձին դեպքերում նաև բնակչության բնագրկմանը:
10. Անկախության տարիներին տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացների ակտիվացում տարածաշրջանային (մարզային) և տեղական (համայնքային) մակարդակներում:

Թեև ՀՀ տարածքում տարաբնակեցման հիմնախնդիրները բազմաթիվ են, սակայն նրանցից իրենց կարևորությամբ և ընդգրկվածությամբ կարելի է առանձնացնել հետևյալ երեքը.

- 1) միակենտրոն տարաբնակեցման համակարգի ձևավորում, քաղաքային գործառույթների ոչ հիմնավորված խիստ կենտրոնացում Երևանում և նրա մերձակա գոտում, Երևանի գերաճի սահմանափակում,
- 2) ՀՀ տարաբնակեցման համակարգի տարածքային և գործառույթային-ենթակարգային դեռևս ոչ հավասարակշռված կառուցվածքի առկայություն, և դրա հետ կապված՝ տարածաշրջանային-մարզային և տեղական-համայնքային մակարդակներով համակարգաստեղծ գործընթացների ակտիվացում և տարածաշրջանային ու տեղական կենտրոնների ցանցի աստիճանական ձևավորում,
- 3) բարձրլեռնային և սահմանամերձ գոտիների զարգացման ակտիվացում, բնակավայրերի և դրանց համակարգերի կայուն զարգացում, նոր աշխատատեղերի ստեղծում և բնակչության միգրացիայի կարգավորում:

Ելնելով նշված նպատակներից և խնդիրներից, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ քաղաքական, տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական զարգացման արդի վիճակն ու առկա միտումները, ՀՀ ռեսուրսային (մարդկային, տարածքային, ջրային, ռեկրեացիոն, և այլն) հնարավորություններն ու տարողունակությունը, կարելի է առաջարկել և մշակել տարաբնակեցման քաղաքականության հետևյալ այլընտրանքային ռազմավարությունները, որոնք ուղղված են գոյություն ունեցող համապետական, տարածաշրջանային (մարզային) և տեղական (համայնքային) խնդիրների լուծմանը:

**Ռազմավարություն 1.** Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական հզոր ներուժի արդյունավետ օգտագործումը գիտատար արտադրությունների, ՏՏ-ի, նորագույն ծառայությունների և զբոսաշրջության զարգացման համար: Երևանում մայրաքաղաքային որոշ գործառույթների (կառավարում, բարձրագույն կրթություն, գիտություն, մշակույթ, նորագույն ծառայություններ) հետագա հնարավոր կենտրոնացումը պետք է անպայման ուղեկցվի նրա մայրաքաղաքային միջավայրին ոչ հարիր և օտար գործառույթների, մասնավորապես՝ բազմաթիվ արտադրությունների և ծառայությունների դուրս բերմամբ Երևանից և դրանց տեղաբաշխմամբ տարաբնակեցման ավելի ցածր կարգի կենտրոններում: Հարկ է նշել, որ այս ռազմավարության մեջ ընդհանուր գծերով պահպանվում և խորացվում են ՀՀ տարաբնակեցման համակենտրոնացման գոյություն ունեցող միտումները: Այս ռազմավարության կիրառման դեպքում զարգացման վեկտորը Երևանից ուղղվում է դեպի մայրաքաղաքային տարածաշրջանը, նրա քաղաք-արբանյակները, հարակից մարզերի բնակավայրերը:

**Ռազմավարություն 2.** Այս ռազմավարությունը ենթադրում է հանրապետությունում տարաբնակեցման այնպիսի ցանցի դրսևորում, որն առավելագույն չափով կնպաստի նրա պաշտպանունակության ամրապնդման, սահմանամերձ բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման ակտիվացման շահերին: Դրան կարելի է հասնել ենթակառուցվածքների զարգացման, վարկային և հարկային արտոնությունների (որոշակի նպատակային պայմաններով) կիրառման շնորհիվ դրանց ներդրումային գրավչության բարձրացմամբ, գյուղերի ամրապնդմամբ, բազմապիսի ծառայություններ մատուցող տարաբնակեցման հենման կենտրոնների ստեղծմամբ: Այս ռազմավարությունն ուղղված է ՀՀ սահմանամերձ և բարձրլեռնային գոտիներում տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացների ակտիվացմանը, ենթակառուցվածքների և միջբնակավայրային կապերի զարգացմանը: Հարկային և վարկային արտոնություններով ներդրումների խրախուսումը, նոր աշխատատեղերի ստեղծումը հնարավորություն կտան առավելագույնս օգտագործել նշված գոտիների բնական և մարդկային ռեսուրսները, աստիճանաբար մեղմացնել մայրաքաղաքային տարածաշրջանի և բարձրլեռնային ու սահմանամերձ գոտիների միջև առկա սոցիալ-տնտեսական զարգացման տարբերությունները: Այդպիսի ռազմավարությունը կհանգեցնի բարձրլեռնային և սահմանամերձ գոտիների բնակավայրերում բնակչության թվի նվազման առկա միտումների աստիճանական կանխմանը, տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացների ակտիվացմանը, տարաբնակեցման տարբեր կարգի կենտրոնների հավասարակշռված զարգացմանը և կայուն տարաբնակեցման ձևավորմանը: Ներկա պահին տարաբնակեցման քաղաքականության առավել նախընտրելի ռազմավարությունն է, քանի որ այն ավելի մեծ չափով է նպատում երկրի տարածքային ամբողջականության ամրապնդմանը:

**Ռազմավարություն 3.** Այս ռազմավարության իրականացումն անմիջականորեն առնչվում է ՀՀ-ում իրականացվող վարչատարածքային փոփոխությունների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման նոր համակարգի ձևավորման հետ: Նախկին վարչական շրջանների միավորման ճանապարհով մարզերի առանձնացման, իսկ ներկա փուլում նաև համայնքների խոշորացման արդյունքում ՀՀ տարաբնակեցման համակարգում

օբյեկտիվ իրավական-տնտեսական նախադրյալներ են ստեղծվում տարածաշրջանային-մարզային և տեղական-համայնքային կենտրոնների ցանցի զարգացման համար, ՀՀ բնակչության և տնտեսության ապակենտրոնացման միտումների ձևավորման և ակտիվացման համար: Այս ռազմավարության դեպքում ծայրամասային և լեռնային տարածքներում մարզ-կենտրոնների քաղաքաստեղծ հիմքում տարածաշրջանային գործառույթների ընդլայնումն ու զարգացումը, հեռանկարում դրանց դարձնելու են տարածաշրջանային «մայրաքաղաքներ», այսինքն Երևանի զարգացմանը հակակշռող կենտրոններ: Իսկ տարածքի տարաբնակեցման բնույթի հաշվառումով հիմնավորված համայնքների խոշորացման գործընթացները հնարվորություն կտան նոր տեղական կենտրոնների ցանցի ձևավորմանը, որը ամբողջ ՀՀ-ում կապահովի առավել համաչափ և ապակենտրոնացված տարաբնակեցում: Հարկ է նշել, որ վարչատարածքային բաժանման և տարաբնակեցման փոխազդեցությունները դինամիկ բնույթ են կրում: Մի կողմից տարաբնակեցման գործընթացները ժամանակի ընթացքում պահանջում են վարչատարածքային միավորների սահմանների փոփոխություններ, իսկ մյուս կողմից վարչատարածքային միավորների սահմաններում տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացներն ավելի օբյեկտիվ, կայուն և ամբողջական բնույթ են կրում:

**Ռազմավարություն 4.** Այս ռազմավարությունը ենթադրում է տարաբնակեցման և արտադրության տեղաբաշխման առավելագույն համապատասխանություն, ընդ որում հաշվի են առնվում ՀՀ սոցիալ-տնտեսական առկա շրջանացումը և դրա տաքսոնոմիական միավորները: Դրան հասնում են տարաբնակեցման գոտիների և արդյունաբերական նոր կլաստերների, հանքարդյունաբերության, մշակող արդյունաբերության և զբոսաշրջության գոտիների փոխկապակցման շնորհիվ: Դրա հետևանքով ՏՀ-ում ներդրումների առումով առավել գրավիչ են դառնում և զարգացում են ստանում մասնագիտական քաղաք-կենտրոնները (հանքարդյունաբերության, մշակող արդյունաբերության, զբոսաշրջության):

Տվյալ ռազմավարության դեպքում ՀՀ նյութական և ֆինանսական ռեսուրսների մի զգալի մասն ուղղվում է ագրոարդյունաբերական միասնացման պայմանների ստեղծմանը, գյուղական տարածքների արագ զարգացմանը և աստիճանական ուրբանիզացմանը, գյուղական բնակչության սպասարկման մակարդակին: Դրա հետևանքով զարգացում են ստանում գյուղական տարաբնակեցման կենտրոնները, գյուղատնտեսական հումքի մշակման կենտրոնները, զգալիորեն կրճատվում է նվազող բնակչություն ունեցող բնակավայրերի թիվը:

**Ռազմավարություն 5.** Այն ենթադրում է ՀՀ-ում տարաբնակեցման այնպիսի ցանցի ստեղծում, որն առավելագույն չափով կնպաստի շրջակա միջավայրի պահպանությանը: Այսինքն, առաջնահերթ նշանակություն է ստանում ՀՀ բնակչության և տնտեսության ապակենտրոնացումը, Երևանի և հարակից բնակավայրերի աճի սահմանափակումը, ՀՀ-ում և առանձին մարզերում համաչափ և կայուն տարաբնակեցման ձևավորումը: Դրան կարելի է հասնել անտառային գոտիներում և էկոլոգիապես այլ խոցելի տարածքներում բնակչության կուտակման և տնտեսական գործունեության սահմանափակման, բնակավայրերի աճի կարգավորման շնորհիվ: ՀՀ առանձին բնակավայրերի, տարբեր կարգի ՏՀ-երի զարգացումը չպետք է խախտի էկոլոգիական հավասարակշռությունը, այլ ընդհակառակը՝ պետք է ստեղծի այնպիսի



տարաբնակեցում, որը ներդաշնակություն հաստատի մարդ-բնություն հարաբերություններում:

Տարաբնակեցման քաղաքականությունն ընդգրկում է վերոհիշյալ ռազմավարությունների որոշակի տարրեր: ՀՀ տարաբնակեցման բարելավմանն ուղղված նշված ռազմավարությունների կիրառման վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցից յուրաքանչյուրը տարբեր չափով է ազդում տարաբնակեցման վրա, կախված՝ ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացմանն առնչվող լուծվելիք խնդիրների առաջնահերթություններից: Այս դեպքում, մեր կարծիքով, պետք է հաշվի առնվեն բոլոր գործոնները և պայմանները, խնդիրների և նպատակների կարևորությունն ու հրատապությունը, դրանց լուծման առաջնահերթությունները, և կախված դրանցից, տվյալ տարածքում ժամանակի տվյալ հատվածում նախապատվությունը տալ այս կամ այն ռազմավարությանը:

Տարաբնակեցման քաղաքականությունն իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ ներկայումս պետության կողմից համայնքների խոշորացման հիմնավորված անցկացման դեպքում տեղական ինքնակառավարման զարգացումը և տարածքների տնտեսական հիմքի ամրապնդումն իրական նախադրյալներ են ստեղծում միջբնակավայրային բազմապիսի կապերի զարգացման, միասնական ենթակառուցվածքների ձևավորման, տարաբնակեցման տեղական կենտրոնների ստեղծման, այսինքն՝ համակարգաստեղծ գործընթացների ակտիվացման համար:

Դրան զուգահեռ ակտիվանում են տարաբնակեցումը կայունացնող և համաչափությանն ու հավասարակշռությանը նպաստող, ինքնակարգավորման և ինքնազարգացման գործընթացները:

Այսպիսով, ՀՀ տարաբնակեցման քաղաքականության վերը թվարկած ռազմավարությունները պետք է ելնեն և հաշվի առնեն՝

- 1) տարաբնակեցման ներկայիս համակարգի օբյեկտիվ վիճակը և կառուցվածքային առանձնահատկությունները:
- 2) Հասարակության մեջ տեղի ունեցող քաղաքական, տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական և հոգեբանական տեղաշարժերը:
- 3) Տարաբնակեցման՝ որպես ինքնակարգավորվող և ինքնազարգացող համակարգ լինելու հանգամանքը:
- 4) «Մարդակենտրոն» սկզբունքը, այսինքն՝ հումանիստական մոտեցումը պետք է լինի տարաբնակեցման քաղաքականության բոլոր ռազմավարությունների առանցքը:
- 5) ՀՀ տարածքային ամբողջականության ամրապնդումը, սահմանամերձ գոտիների բնակչության անվտանգության ապահովումը:

### **Գրականություն**

1. **ՀՀ տարաբնակեցման** գլխավոր նախագիծ, հաստատված ՀՀ կառավարության 10.04.2003 հ.610 որոշմամբ, [http:// www.mud.am/maps/ tarabnak.pdf](http://www.mud.am/maps/tarabnak.pdf). Դիտում՝ 08.02.2023:
2. **Մանասյան Մ.Գ.**, ՀՀ տարաբնակեցման համակարգը, ԵՊՀ, 2005. – 400 էջ:

3. **Манасян М.Г.**, Теоретические и методологические вопросы географического исследования расселения, В кн. Теория социально-экономической географии: синтез современных знаний. Смоленск, 2006, С. 159-163.
4. **National** Statistical Service of the Republic of Armenia, [www.armstat.am](http://www.armstat.am)

**М.Г. Манасян, А.М. Манасян**

## **ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ ЭКИСТИЧЕСКОЙ ПОЛИТИКИ ПЕРЕСЕЛЕНИЯ**

*В статье представлены основные особенности и тенденции современного расселения РА, а также существующие проблемы, обозначены принципы и направления научно-обоснованной экистической политики для их решения и механизмы их реализации. В настоящее время при проведении политики регулирования расселения важное значение приобретает обеспечение безопасности населения приграничных поселений и укрепление территориальной целостности территории РА. В статье выделены те факторы и условия, которые определяют новые направления экистической политики. На их основе предложены пять альтернативных стратегий и способов их реализации.*

**Ключевые слова:** расселение, система расселения, региональный центр, местный центр, устойчивое расселение, укрупнение общин, экистическая политика, альтернативные стратегии.

**M.G. Manasyan, H.M. Manasyan**

## **BASIC DIRECTIONS OF THE NATIONAL RESETTLEMENT POLICY**

*The article presents the main features and trends of the modern settlement of the RA, as well as the existing problems, the principles and directions of the scientifically based resettlement policy for their solution and the mechanisms for their implementation. The article substantates that in the present times, during the regulation of population settlement, ensuring the safety of the border settlements and strengthening the territorial integrity of RA is of great importance. The article highlights those factors and conditions that determine the new directions of ekistic policy. On their basis, six alternative strategies and ways of their implementation are proposed.*

**Keywords:** resettlement, resettlement systems, regional center, local center, sustainable resettlement, settlement enlargement, resettlement policy, alternative strategies.

**Մանասյան Մաքսիմ Գառնիկի** - աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (ՀՀ ՆԳՆ ԾԿՊԱ)

**Մանասյան Հայկ Մաքսիմի** - աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ («Քաղաք. և տնտեսական ռազմավարական կենտրոն» ՀԿ).

Ներկայացման ամսաթիվը՝ 06.03.2023  
Գրախոսման ամսաթիվը՝ 13.03.2023

Հ.Պ. Ղարիբյան, Ա.Զ. Գասպարյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՀԱՆՔԱԽՈՐՇԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ, ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՔՍՈՑՆԵՐ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Պատերազմական գործողությունների ժամանակ բնակչության պաշտպարումը պաշտպանական կառույցներում բնակչության կյանքի և գործունեության ապահովման հիմնական միջոցն է: Բնակչության պաշտպանության տեսանկյունից կարևորվում է Հայաստանի Հանրապետության տարածքի լեռնային հանքախորշերի օգտագործումը՝ որպես թաքստոցներ պատերազմական գործողությունների ժամանակ:

**Առանցքային բառեր.** լեռնային հանքախորշ, բնակչության պաշտպարում, պաշտպանական կառույց, թաքստոց, պատերազմական գործողություն:

Հայտնի է, որ զանգվածային ոչնչացման զենքի, ինչպես նաև ժամանակակից զենքի սովորական միջոցների ազդեցությունից մարդկանց կենսագործունեության ժամանակավոր ապահովումը համապատասխան շինությունների տարածքում կոչվում է պատսպարում՝ ինչը հանդիսանում է քաղաքացիական պաշտպանության ձևերից մեկը [1]:

Պատսպարումն իրականացվում է հատուկ շինություններում՝ ապաստարաններում և թաքստոցներում, այդ թվում՝ նաև արագ կառուցվող, խորացված տարածքներ, հանքախորշեր, ստորգետնյա անցումներ, մետրոպոլիտեն, բնակելի ֆոնդի առաջին հարկի տարածքներ, նկուղներ, կիսանկուղներ [3]:

Հայաստանի Հանրապետության տարածքում լեռնային օգտակար հանածոների արդյունահանման ժամանակ երկրի խորքերում ձևավորվում են ազատ արդյունահանվող խոռոչներ, որոնք կոչվում են ստորգետնյա լեռնային հանքափորվածքներ:

Ժամանակակից լեռնահանքային ձեռնարկությունը գտնվում է զգալի խորության վրա (1500 մ և ավելի) և օգտակար հանածոների մշակումն իրականացվում է հանքահորային եղանակով ընդարձակ տարածքներում: Նման տարածքների յուրացման համար ստեղծվում է ստորգետնյա հանքերի շահագործման ընդարձակ համակարգ [2]:

Լեռնային հանքախորշերում հանքափորվածքներն ունեն բարձր պաշտպանվածություն ժամանակակից զենքերից: Դրանց գտնվելու վայրը նվազեցնում է ամբողջական պաշտպանություն լույսային ճառագայթումից, ինչպես նաև ապահովում հարվածային ալիքի ազդեցության զգալի նվազեցում:

Հանքավայրերում պաշտպանական կառույցների տեղադրման տեսակետից ամենամեծ հետաքրքրությունը ներկայացնում են մշտական հենարան ունեցող և կայուն ապարների մեջ մտած հանքախորշերը:

Հանքավայրերում պաշտպանական կառույցների համալրման փորձը ցույց է տվել, որ ամենաարդյունավետը դրանց տեղադրումն է նվազագույն թվով անցուղիներ ունեցող երկար հանքափորվածքներում:

Հանքավայրերում, որտեղ հանքախորշը բացվում է մինչև 30° թեքության անկյան տակ գտնվող հանքուղու բովանգքի և թեք հանքափողերով, թաքստոցները նպատակահարմար է

տեղակայել հանքուղու բովանցքում և թեք հանքափողերում, որոնց մուտքերը մակերևույթից գտնվում են հանքարդյունաբերական ձեռնարկության հիմնական արտադրական հրապարակում:

Հանքափորվածքները կարող են ունենալ հատման տարբեր ձևեր՝ ուղղանկյուն, սեղանաձև, կամարակապ և կամարավոր:



**Նկ. 1. Հանքուղու բովանցք**

Հանքափորվածքի ներսում օդի ջերմաստիճանը կախված է հանքի խորությունից: Մոտ 30 մ խորության վրա ջերմաստիճանը մնում է անփոփոխ ողջ տարին և կազմում է 4-17°C, հետագա խորացման դեպքում այն բարձրանում է միջինը 1°C-ով յուրաքանչյուր 25-30 մ-ի համար: Ջերմաստիճանը բարձրանում է միջինը 1°C-ով յուրաքանչյուր 100 մ-ում մթնոլորտային ճնշման բարձրացման արդյունքում:

Օդի ջերմաստիճանի և խոնավության բարձրացումը բացասաբար է անդրադառնում մարդու օրգանիզմի վրա՝ նրա ջերմակարգավորման խախտման պատճառով:

Երբ էլեկտրաէներգիայի արտաքին հոսանքի աղբյուրն անջատվում է, դժվարություններ են առաջանում՝ կապված ջրահեռացման կայանքների, մեխանիկական բարձրացնող սարքերի և հանքի օգափոխության համակարգի դադարեցման հետ:

Մեկ անձի համար հանքափորվածքի հատակի մակերեսից հատկացվում է 1 մ<sup>2</sup> տարածք: Երբ առկա է աղտոտված օդի ներթափանցման վտանգ, որը չի մաքրվում ներծծող զտիչներով, մակերեսը մեկ անձի համար ավելանում է մինչև 6 մ<sup>2</sup>, ինչն անհրաժեշտ է օդամատակարարման համար՝ պայմանավորված հարմարեցվող հանքափորվածքի մեջ պարունակվող օդի ծավալով:

Վերգետնյա հատվածում տեղակայված են օգափոխման խցիկը և տարածքներ գետնի մակերևույթի վրա աշխատող պատսպարվողների ժամանակավոր կացության համար: Այդ հատվածն ունի մեկ անձի համար նախատեսված տարածք, որը 5-6 անգամ պակաս է սահմանված չափերից և ծառայում է որպես մակերևույթի վրա աշխատողների համար հավաքակետ, ովքեր հետագայում իջնելու են կառույցի ստորգետնյա հատված [2]:

Լեռնային հանքախորշերում հանքափորվածքների պիտանիությունը, որպես թաքստոց, գնահատելու չափանիշներն են՝

- հանքափորվածքների լայնական կտրվածքների մակերեսների, ծավալների և չափերի

համապատասխանելիությունը.

- գոյություն ունեցող հանքափորվածքների ցանցի զարգացման հեռանկարները.
- հանքափորվածքների կայունությունը, որը որոշվում է ապարների և օգտակար հանածոների ծածկող շերտերի հզորությամբ և ֆիզիկական ու մեխանիկական հատկություններով, ինչպես նաև առանց օժանդակ հենարանի լրացուցիչ տեղադրման հանքափորվածքի օգտագործման հնարավորությունը.
- մուտքերի (հանքուղիներ, բովանցքեր), հանքարդյունաբերության, նախապատրաստական և մաքրող հանքափորվածքների առկայությունը և վիճակը.
- ձեռնարկության հիմնական արտադրական հրապարակին ավտոմոբիլային և երկաթգծի ճանապարհների մոտեցման ուղիների վիճակը և դրանց հզորությունը.
- լեռնային ապարների հիդրո- և ջերմաֆիզիկական հատկությունները.
- հանքախորշում օդի ջերմաստիճանի և խոնավության ցուցանիշները և ստորերկրյա ջրերի ներհոսքը.
- հանքավայրի մթնոլորտում վնասակար, պայթուցիկ և այրվող գազերի ու փոշու պարունակությունը.
- էլեկտրաէներգիայի և ջրամատակարարման աղբյուրները:



**Նկ. 2. Լեռնային հանքախորշերում հանքափորվածք**

Կախված կոնկրետ պայմաններից, որպես թաքստոց օգտագործվող լեռնային հանքախորշերի հանքափորվածքի մուտքերը (ելքերը) կարող են լինել հետևյալ կառուցվածքների՝

- *նախամուտք-անցախուց*, որի մեջ տեղադրված են պաշտպանիչ-հերմետիկ դռներով երկու միջնապատ.
- *նախամուտք*, որում արտաքին միջնապատը և դուռը պաշտպանիչ-հերմետիկ են, իսկ ներքինը՝ հերմետիկ.
- *նախամուտք*, որում դռներով միջնապատերը հերմետիկ են տեղադրված,
- *միաշերտ պաշտպանիչ-հերմետիկ միջնապատ*՝ պաշտպանիչ- հերմետիկ դռով.
- *միաշերտ հերմետիկ միջնապատ*՝ հերմետիկ դռով:

Պատասպարվածների հետիոտն տեղաշարժի համար նախատեսված հանքափորվածքները պետք է հագեցած լինեն.

- բազրիկ-ճաղաշարերով՝ 7-ից 15<sup>0</sup> թեքության անկյուններով.
- աստիճաններով և ճաղաշարերով ելարան-կամրջակներով՝ 15-ից 30<sup>0</sup>-ից ավելի.

- ճաղերով աստիճաններ՝ ավելի քան 30-ից 45°;
  - սանդուղքային բաժանմունքներով՝ ավելի քան 45°:
- Հաշվի առնելով հանքափորվածքների աշխատանքի պայմանները և միջնապատերի տեսակները, դրանց հերմետիկացմանը կարելի է հասնել հետևյալ եղանակներով՝
- տեղակայող ապարների խծուծներով պատում (իրականացնում են պաշտպանիչ-հերմետիկ սարքվածքների տեղադրման համար նախատեսված վայրերում).
  - քարային, բլրկային, բետոնե և բետոնիտային միջնապատերի երեսպատում ցեմենտի կամ սիլիկատային լուծույթով.
  - կոճղային միջնապատերի ծածկում կավե շաղախով, բացառությամբ ջրի զգալի ներհուսքով կամ 80%-ից պակաս հարաբերական խոնավության հանքափորվածքներում.
  - մեկուսիչ մաստիկով բոլոր տեսակի միջնապատերի ծածկում.
  - միջնապատերի քլորիդա-կավե մածուկով ծածկում՝ դրանց օդանթափանցելիության բարձրացման համար, բացառությամբ ողողված կամ օդի հարաբերական խոնավության 45%-ից ցածր տարածքների.
  - միջնապատերի սոսնձապատում լատեքսով և կալցիումի քլորիդի լուծույթով կամ հեղուկ ապակու լուծույթով՝ առավել խոցելի տեղերում (տարբեր խողովակաշարերի, մալուխների անցման վայրեր և այլն):

Զտիչ օդափոխանակության ագրեգատում խորհուրդ է տրվում օգտագործել ավազի կամ խարամե գտիչներ և էլեկտրական մեխանիկական կամ հեծանվային շարժիչով պարզագույն օդափոխիչներ, ինչպես նաև փուքսային պայուսակներ:

Որպես գտիչի լցոնիչ, օգտագործվում է օդային չոր քարածխի խարամ 0,5-1 մմ հատիկների չափով կամ 0,4% խոնավության ավազ հետևյալ ֆրակցիոն բաղադրությամբ՝ 1-3 մմ՝ 22%, 0,5-1 մմ՝ 70-95%, 0,5 մմ-ից պակաս՝ ոչ ավելի, քան 5-8%:

Հանքախորշերում թաքստոցներ սարքավորելիս շինարարական աշխատանքների հիմնական մասը բաժին է ընկնում մուտքերի պաշտպանիչ և հերմետիկ միջնորմների (պաշտպանիչ հանգույցների) կառուցմանը:

Հանքավայրերում պատսպարվողների փրկությունը կազմակերպելու համար շատ կարևոր է խոցման օջախում հայտնվելուց հետո նրանց տարհանման հնարավորությունը:



**Նկ. 3. BM3-4 օդափոխիչ**



**Նկ. 4. Հանքախորշային վազոնիկ 4BF**

Կառույցի օդի ճնշամղման և օդափոխության ստեղծումը, որպես կանոն, իրականացվում է օդափոխման սարքավորումների երկու հավաքածուով: Մեկ հավաքածու, որը հիմնված է էլեկտրական ձեռքի օդափոխիչների աշխատանքի վրա, նախատեսված է օդ մատակարարելու համար, որը մաքրվում է վնասակար կեղտից ներծծող զտիչներով: Երկրորդ հավաքածուն, որը հիմնված է BMՅ-4 օդափոխիչի օգտագործման վրա (պայթյունից պաշտպանված) ապահովում է օդի ճնշամղման հետնահոսքը մուտքերում:

Քանի որ ներծծող զտիչները չեն մաքրում աղտոտված օդն անխաճնի օքսիդից, այդ նպատակի համար հանքախորշի ստորգետնյա կառույցներում օգտագործվում է ՓԲ-70 զտիչը:

Հանքավայրի մթնոլորտից մեկուսացումը մուտքերում օդի ճնշամղման պահպանմամբ հուսալի միջոց է այլ թունավոր նյութերից պաշտպանվելու համար, որոնք հնարավոր չէ չեզոքացնել սովորական ներծծող զտիչներով:

Հանքավայրում տեղակայված թաքստոցների օդափոխությունն իրականացվում է խաղաղ ժամանակ օգտագործվող հանքահորային օդափոխման համակարգով: Այս համակարգի բացակայության կամ դրա խափանման դեպքում օգտագործվում է բնական օդափոխություն կամ օդափոխություն տեղական օդափոխիչներով: Էլեկտրամատակարարումն իրականացվում է արտաքին ցանցից: Որոշ դեպքերում ապահովվում է պաշտպանված ինքնավար էլեկտրամատակարարում՝ դիզելային էլեկտրակայանների կիրառմամբ, որոնք կարող են կիրառվել ոչ խոր հանքախորշերում տեղակայված մի քանի կառույցներում: Դիզելային էլեկտրակայանների օգտագործումը հանքախորշերի աշխատանքում սահմանափակված է հետևյալ պատճառներով՝ հանքափորվածքների մեծ մասում գազի բարձր պարունակությունը, դիզելային էլեկտրակայանի սենյակի օդափոխման և օգտագործված գազերի մեկուսացման բարդությունը:

Ինքնավար էլեկտրամատակարարման համար առավել արդյունավետ է հանքավայրի էլեկտրաքարշերի պահեստային մարտկոցների օգտագործումը, որպես էլեկտրաէներգիայի աղբյուր: Մարտկոցները տեղակայվում են թաքստոցների մոտ, ինչը վերացնում է պաշտպանական կառույցվածքում դրանց համար հատուկ խցեր սարքավորելու անհրաժեշտությունը:

Թաքստոցներում նախատեսում են հանքախորշերի կապի համակարգի հիման վրա ազդարարման և կապի միջոցների սարքավորում: Հեռախոսային ընդունիչ կապն ապահովվում է թաքստոցի ներսում, ինչպես նաև երկրի վերգետնյա մակերևույթում տեղակայված կառավարման կետի հետ:

Խմելու ջրի պաշարները մեկ անձի համար 3 լ/օր չափով պահելու համար հանքախորշերի պաշտպանական կառույցներում օգտագործվում են հանքախորշային վազոնիկ 4BԴ, ինչպես նաև 1.5-3.5 մ<sup>3</sup> տարողությամբ բաքեր: Որոշ դեպքերում խմելու համար օգտագործվում է հակահրդեհային ջրատարներում առկա, ինչպես նաև (պետական սանիտարական հիգիենիկ տեսչության մարմինների համաձայնությամբ) հանքախորշի ջուրը:

Հանքախորշերի պաշտպանական կառույցներում տեղադրվում են տղամարդկանց և կանանց առանձին սանհանգույցներ 75 անձի համար մեկ միավորի չափով և մեկ լվացարան 200 հոգու համար, բայց առնվազն մեկը մեկ սանհանգույցում: Սանհանգույցը դրվում է կացարանից ելնող օդային հոսքի վրա: Սանհանգույցներում տեղադրվում են հանքախորշային

վագոնիկ ВГ՝ մեկ անձի հաշվով 2 Վ/օր ֆեկալային մնացորդների ընդունման համար: Դրանք տեղադրվում են այնպես, որ վագոնիկի վերևից մինչև հանքափորվածքի տանիք հեռավորությունը լինի առնվազն 1,3 մ:

Հանքախորշերի և քարանձավների հիման վրա սարքավորված թաքստոցները պետք է միացված լինեն մոտեցման հանքափորվածքներով առնվազն երկու ելքով դեպի գետնի մակերևույթ և պատրաստ լինեն ընդունելու բնակչությանը հետևյալ ժամկետներում՝

- 6 ժամից ոչ ավելի՝ լիարժեք օգտագործման համար,
- ոչ ավելի, քան 1 օր՝ սահմանափակ օգտագործման համար [2]:

Ստորգետնյա հանքախորշերում, տեխնիկական հնարավորության և տնտեսական նպատակահարմարության դեպքում, կարելի է տեղակայել նաև պաշտպանական և տնտեսական մեծ նշանակություն ունեցող օբյեկտներ և արտադրություններ:

Այդ թվում՝

1. կառավարման կետեր, ռազմական տեխնիկայի, ճշգրիտ գործիքների, էլեկտրոնային սարքավորումների արտադրամասեր.
2. պետական նյութական և պարենային պաշարների բազաներ.
3. բաշխիչ սառնարաններ, հեղուկ վառելիքի, ռազմավարական այլ նյութերի և հումքի պահեստներ:

Այս օբյեկտների համար որպես հանքային խոռոչներ ընտրվում են այն ստորգետնյա տարածքները, որոնք հարմար են դրանց տեղավորելու համար, հաշվի առնելով դրանց հուսալի պաշտպանության ապահովումը:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության տարածքի լեռնային հանքախորշերը կարող են օգտագործվել որպես քաղաքացիական պաշտպանության թաքստոցներ պատերազմական գործողությունների ժամանակ՝ այդ կառույցներում նախօրոք իրականացնելով որոշակի նախապատրաստական միջոցառումներ:

## Գրականություն

1. «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը 05.03.2002թ.:
2. **Գասպարյան Ա.Զ.**, Ղարիբյան Հ.Պ., «Քաղաքացիական պաշտպանության պաշպանական կառույցները և դրանց շահագործումը», Ուսումնական ձեռնարկ: Եր.: Աստղիկ գրատուն հրատարակչություն, 2022. - 196 էջ:
3. **Каммерер Ю.Ю.**, Кутырев А.К., Харкевич А.Е., Защитные сооружения гражданской обороны. Устройство и эксплуатация. Энергоатомиздат. М. 1985. - 232 с.



А.П. Карибян, А.З. Гаспарян

## ИСПОЛЬЗОВАНИЕ ГОРНЫХ ШАХТ НА ТЕРРИТОРИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В КАЧЕСТВЕ УКРЫТИЙ ГРАЖДАНСКОЙ ОБОРОНЫ ВО ВРЕМЯ ВОЕННЫХ ДЕЙСТВИЙ

*Укрытие населения в оборонительных сооружениях во время боевых действий является основным средством обеспечения жизнедеятельности населения. С точки зрения защиты населения важное значение имеет использование выработок горных шахт на территории Республики Армения в качестве укрытий во время боевых действий.*

**Ключевые слова:** горная шахта, укрытие населения, оборонительное сооружение, убежище, военные действия.

H.P. Gharibyan, A.Z. Gasparyan

## THE USE OF MOUNTAIN MINE CAVERNS IN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA, AS CIVIL DEFENSE ASYLUMS DURING MILITARY OPERATIONS

*Sheltering the population in defense structures during military operations is the main means of ensuring the life and activity of the population. From the point of view of protecting the population, the use of mountain mine caverns in the territory of the Republic of Armenia as hiding places during military operations is important.*

**Key words:** mountain mine, population shelter, hideout, defensive structure, war operation.

**Ղարիբյան Հայկանդուխտ Պապինի** – տեխ. գիտ. թեկն., դոցենտ (ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ).

**Գասպարյան Արայիկ Զավենի** - դասախոս, ԷԿԱՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, կ/ծ գնդապետ (ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ).

Ներկայացման ամսաթիվը՝ 23.02.2023

Գրախոսման ամսաթիվը՝ 28.02.2023

Ս.Գ. Պողոսյան

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

Սույն հոդվածում դիտարկվում են մշակութային քաղաքականության տեսամեթոդական ասպեկտները: Մասնավորապես, վերլուծվում են մշակույթի և մշակութային քաղաքականության էությունը, մշակութային քաղաքականության բովանդակությունը՝ որպես կառավարչական գործունեության առանձնահատուկ տեսակ: Դիտարկվում են մշակութային քաղաքականության բաղադրիչները, ուղղությունները, ինստիտուտները, իրականացման մեխանիզմները և գործիքակազմը: Ընդգծվում է պետության՝ որպես մշակութային քաղաքականության սուբյեկտի առանձնահատուկ դերը:

**Առանցքային բառեր.** մշակույթ, մշակութային քաղաքականություն, մշակույթի ոլորտի կառավարում, մշակութային ինստիտուտներ, մշակութային քաղաքականության ուղղություններ:

«Մշակութային քաղաքականություն» հասկացությունը, որպես պետական և հասարակական ինստիտուտների գործունեության ոլորտ, գիտական շրջանառության մեջ է դրվել միայն XX դարի երկրորդ կեսին, երբ տեսական մակարդակում ձեռնարկվեցին սույն երևույթի էության իմաստավորման առաջին փորձերը: Այս փուլում տեղի է ունենում հասարակության մշակութային գործընթացների կառավարման հիմնական սկզբունքների ակտիվ ձևավորում Եվրոպական երկրներում: Վերջին տասնամյակների ընթացքում պետությունների արտաքին հարաբերություններում, ինչպես նաև միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների գործունեության ասպարեզում նկատվում է մշակույթի դերի բարձրացման միտում, երբ այն օգտագործվում է որպես երկրների միջև երկխոսության զարգացման և ամրապնդման խթանիչ:

Մշակութային քաղաքականությունը ձևավորվում է մշակույթի և քաղաքականության փոխներգործության արդյունքում: Ակնհայտ է, որ մշակութային քաղաքականությունը բազմիմաստ հասկացություն է, և ունի բազմաթիվ սահմանումներ: Սա պայմանավորված է նրանով, որ «մշակույթ» և «քաղաքականություն» հասկացություններն ինքնին պարունակում են մեկնաբանությունների և պարզաբանումների լայն շրջանակ:

Մշակույթը (լատ. cultura – մշակում) հասարակության և մարդու պատմական զարգացման որոշակի մակարդակն է, մարդու գործունեության եղանակը և այդ գործունեության արդյունքը: Մշակույթը մարդու կողմից ստեղծված «երկրորդ բնությունն է», գոյության այն միջավայրը, որը նա ստեղծում, վերարտադրում և փոխանցում է սերունդներին՝ նյութական, հոգևոր, սոցիալական արժեքների, տարատեսակ գիտելիքների, գաղափարների, հմտությունների, գեղագիտական իդեալների, հավատալիքների, խորհրդանիշների, նորմերի, ավանդույթների ձևով: Մշակույթը հաճախ բնութագրվում է որպես արժեքների համակարգ, ինչպես նաև յուրահատուկ միջոց և գործիք, որը կարող է նպատակաուղղված և կանխատեսվող ներգործություն ունենալ հասարակության կենսագործունեության բոլոր բնագավառների վրա:

Մշակույթը պետականության ամրապնդման, ազգային ինքնության պահպանման, համազգային խնդիրների լուծման, հասարակության կայուն զարգացման կարևորագույն երաշխիքն է: Մշակույթից դուրս հնարավոր չէ ձևավորել քաղաքացիական միասնություն, ազգային

գիտակցություն և արժանապատվություն, քաղաքական կայունություն, ռազմական անվտանգություն, տնտեսական զարգացում և ընդհանուր նպատակներին հասնելու կարողություն: Հավասարապես անհնարին է զարգացման ազգային գաղափարախոսության հաստատումը՝ առանց պատասխանատու, ազատ մտածողությամբ օժտված ստեղծագործ անհատի ձևավորման: Հետևաբար, պետական քաղաքականությունը պետք է բխի մշակույթի կարևորագույն հասարակական առաքելության ընկալումից, հիմնված լինի մշակույթի հսկայական կրթական և դաստիարակչական ներուժի ճանաչման վրա և պետք է առավելագույնս օգտագործվի անձնավորության ձևավորման գործընթացում:

Ակնհայտ է, որ պետությունը և քաղաքականությունը կրում են մշակույթի ներգործությունը: Մասնագետներն առանձնացնում են հասարակական-քաղաքական կյանքի վրա մշակույթի ազդեցության հետևյալ ուղղությունները.

- առանձին անհատի դաստիարակություն և սոցիալականացում,
- արժեհամակարգի մշակում և հաստատում,
- քաղաքական գործիքների գործառնության մոդելների ստեղծում, քաղաքական կյանքի տարբեր իրավիճակներում քաղաքական որոշումների մշակում և ընդունում, պատշաճ վարքագծի դրսևորում [1]:

«Մշակութային քաղաքականություն» եզրույթի առաջին բնորոշումներից մեկը սահմանվել է 1967 թ.՝ Մոնակոյում կայացած ՅՈՒՆԵՍԿՕ-ի կլոր սեղանի շրջանակներում: «Մշակութային քաղաքականություն: Նախնական ուսումնասիրություն» զեկույցում որոշվեց «մշակութային քաղաքականությունը» բնորոշել որպես «գործառնական սկզբունքների, վարչական և ֆինանսական գործողությունների և ընթացակարգերի համախումբ, որոնք ապահովում են պետության գործունեության հիմքը մշակույթի ոլորտում»: Այս համատեքստում, մշակութային ոլորտում քաղաքականության իրականացումն իրենից ներկայացնում է «գիտակցված և կշռադատված գործողությունների ամբողջություն, որն ուղղված է որոշակի մշակութային նպատակների իրականացմանը՝ հասարակության մեջ առկա բոլոր ֆիզիկական և հոգևոր ռեսուրսների օպտիմալ օգտագործման միջոցով» [2]:

Մշակութային քաղաքականության բնորոշում է տվել սերբ հետազոտող Միլենա Դրագիչևիչ-Շեշիչը: Նա մեկնաբանում է «քաղաքականություն» եզրույթը, որպես գիտակցված գործունեություն, որն ուղղված է հասարակության կողմից պահանջված նպատակների իրականացմանը: Մ. Դրագիչևիչ-Շեշիչը կարծում է, որ հասարակական կյանքի յուրաքանչյուր կողմ ունի իր նպատակը՝ կրթության, առողջապահության, տնտեսության ոլորտներում: Երբ խոսքը վերաբերում է մշակույթի ոլորտում հասարակության կողմից պահանջված նպատակների իրականացմանը, ապա առաջ է գալիս «մշակութային քաղաքականություն» հասկացությունը: Դրագիչևիչ-Շեշիչի տեսության համաձայն՝ մշակութային քաղաքականությունը գիտակցված կարգավորումն է մշակույթի ոլորտում, երբ անհրաժեշտ որոշումներ են կայացվում բոլոր հարցերի շուրջ, որոնք վերաբերում են ամբողջ հասարակության մշակութային զարգացմանը [3]:

Ֆրանսիացի հետազոտողներ Ավգուստին Ժիրարդի և Ժենևեվ Ջենթիլի կարծիքով՝ «քաղաքականությունը փոխկապակցված նպատակների, պրակտիկ խնդիրների և միջոցների համակարգ է՝ մշակված փորձագետի կողմից և ուղղված մարդկանց որոշակի խմբին: Մշակութային քաղաքականությունը կարող է իրականացվել կուսակցության, միության, կրթական շարժ-

ման, կազմակերպության, ձեռնարկության, քաղաքի, կառավարության շրջանակներում: Սակայն, քաղաքականության սուբյեկտից անկախ, այն ենթադրում է երկարաժամկետ նպատակների, միջնաժամկետ և չափելի խնդիրների ու միջոցների (մարդկային ռեսուրսներ, ֆինանսներ և օրենսդրական բազա) գոյություն, միավորված չափազանց բարդ համակարգում» [4]:

Այսպիսով, մշակութային քաղաքականությունը պետական քաղաքականության ուղղություններից մեկն է՝ նորմերի և սկզբունքների, գիտակցված և նպատակաուղղված գործողությունների ամբողջություն, որը, տարբեր պետական և հասարակական ինստիտուտների միջոցով պետք է կարգավորի հասարակության մշակութային կյանքը, նպաստի մշակույթի զարգացմանը, պահպանմանը, տարածմանը: Մշակութային քաղաքականությամբ են պայմանավորված հասարակության մշակութային կյանքի որակը, տարբեր սոցիալական սուբյեկտների ազդեցության աստիճանը մշակույթի և մշակութային գործընթացների վրա:

Բնական է, որ հասարակության մշակութային կյանքի բազմատեսակ գործընթացների զգալի մասը ընթանում է տարերայնորեն և չի կառավարում: Դրա հետ մեկտեղ, այդ համալիր գործընթացի առանձին բաղադրիչները ենթարկվում են բանական և նպատակաուղղված կարգավորման, որը կատարվում է տվյալ քաղաքակրթության ռազմավարական տեսլականի դիրքերից: Արհեստական կարգավորման միջոցառումների համալիրը կարելի է անվանել մշակութային քաղաքականություն:

Ըստ էության, մշակութային քաղաքականություն իրականացնելիս պետությունը հասարակությանը ներկայացնում է մշակույթի և պետության փոխհարաբերության որոշակի մոդել, որը կանխորոշում է այդ բնագավառի հիմնական առաջնությունները, նպատակները և առաջարկում է դրանց իրականացման մեխանիզմները:

Պետական մշակութային քաղաքականությունը ներառում է իր մեջ երեք հիմնական բաղադրիչ՝ հայեցակարգային (կոնցեպտուալ), օրենսդրական և տնտեսական: Նշված բաղադրիչներից առաջնայինը հայեցակարգային բաղադրիչն է՝ իբրև հիմնարար չափանիշ: Մշակութային քաղաքականության մյուս երկու բաղադրիչների առանձնահատկությունները որոշվում են առաջինի հիման վրա:

Որպես մշակութային քաղաքականության կարևորագույն սուբյեկտ պետությունն իր գործառույթներին համապատասխան պետք է ձևավորի, կարգավորի հասարակության մշակութային կյանքը: Ընդ որում, կարևորագույն խնդիրներից մեկն է դառնում այնպիսի հայեցակարգի ձևավորումը, որը կբավարարի հասարակության լայն շերտերի, սոցիալական տարբեր խմբերի հետաքրքրություններն ու պահանջարկները: Պետությունն է կրում մշակութային քաղաքականության մշակման և իրականացման ողջ պատասխանատվությունը: Միայն պետությանն է իրավունք վերապահված օրենսդրորեն կարգավորել և կառավարել հասարակության մշակութային կյանքը, ձևավորել համընդհանուր ազգային շահից բխող մշակութային քաղաքականության հայեցակարգ և սահմանել մշակույթի ֆինանսավորման կանոնները:

Հետևաբար մշակութային քաղաքականությունը պետք է.

- առաջին հերթին, առանց բացառության դառնա պետական քաղաքականության բոլոր ուղղությունների անբաժան մասը՝ արտահայտելով նրա հոգևոր արժեքային և բարոյանորմատիվ ասպեկտները,

- երկրորդ հերթին, ձևավորի սեփական մշակութային ռազմավարություն (նեղ իմաստով)՝ որպես պետական քաղաքականության հատուկ ուղղություն և պետության կողմից կարգավորվող հասարակական գործունեություն, որը խթանում է սոցիալապես ընդունելի և մարդու հոգևոր արժեքային և սոցիալ-նորմատիվ նախընտրելի դրսևորումները, նրա հասարակական և անհատական կեցության բովանդակություններն ու ձևերը:

Ամերիկյան հետազոտողներ Դոն Ադամսը և Առլեն Գոլդբարդը կարծում են, որ մշակութային քաղաքականությունը սահմանելու և իրականացնելու համար պահանջվում է գործողության երեք տեսակ.

- մշակութային արժեքների, նպատակների և առաջնահերթությունների սահմանում,
- այդ նպատակներին համապատասխանող նախաձեռնությունների և ծախսերի ծրագրերի մշակում, որոնք առավել հաճախ դիտարկվում են որպես «հստակ» մշակութային քաղաքականության ձևավորման հիմք,
- մշակութային քաղաքականության մշտադիտարկում՝ գործընթաց, որը, որոշակի չափանիշների լույսի ներքո թույլ է տալիս գնահատելու յուրաքանչյուր սոցիալական գործողության մշակութային ազդեցությունը [5]:

Արտահայտելով այն համոզմունքը, որ պետությունը պետք է ակտիվ մասնակցի մշակութային քաղաքականության ձևավորմանը, ամերիկյան հետազոտողներն առանձնացնում են մշակութային քաղաքականության 6 հիմնական ուղղություն.

1. **մշակութային ժառանգության պահպանություն.** նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգություն՝ պատմամշակութային հուշարձաններ, թանգարանային հավաքածուներ, արվեստ, ժողովրդական ստեղծագործություն, արհեստներ և այլն:
2. **Ստեղծագործության աջակցություն.** ստեղծագործական գործունեության ազատության ապահովում, մշակութային կազմակերպությունների, անհատ արվեստագետների գեղարվեստական գործունեության աջակցություն, դեբյուտային գործընթացների խրախուսում, ստեղծագործական պատվերների իրականացում, նյութատեխնիկական բազայի արդիականացման ապահովում և այլն:
3. **Մշակութային արտադրանքի փարածում.** ներկայացումների, համերգների, հյուրախաղերի, ցուցահանդեսների, հրատարակչական գործի, հեռարձակման, տարածման ցանցի և տարատեսակ մշակութային միջոցառումների ֆինանսավորում:
4. **Հետազոտություն.** մշակութային քաղաքականության իրականացման արդյունքների մոնիթորինգ, մշակութաբանության և մշակույթի ոլորտում գիտական ուսումնասիրությունների աջակցություն:
5. **Կադրերի պատրաստում.** մշակույթի ոլորտի կադրերի պատրաստման համակարգի կատարելագործում, մասնագետների կրթության շարունակականության ապահովում, կառավարիչների ինստիտուտի ձևավորում:
6. **Կրթություն.** գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության որակի և մատչելիության ապահովում:

Հետազոտողները նշում են, որ մշակութային քաղաքականության ուղղություններից մեկը կարող է լինել նաև անիմացիան, որը խթանում է հանրության մասնակցությունը մշակութային գործընթացներին [5]:

Մշակութային քաղաքականության իրագործման հաջողությունը մեծապես պայմանավորված է տարբեր սուբյեկտների գործունեությունը համախմբելու կարողությամբ: Ժողովրդավարական հասարակությունում մշակութային քաղաքականության սուբյեկտների շրջանակը ներառում է պետական կառույցները (պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմինները), մշակութային ինստիտուտները (հիմնարկներ և կազմակերպություններ), կրթական հաստատությունները, զանգվածային լրատվական միջոցները, մշակույթի ոլորտի մասնագետների և փորձագետների հանրույթը, հասարակական կազմակերպությունները, բիզնես հանրույթը և քաղաքացին:

Մշակութային քաղաքականության կարևոր սուբյեկտներից են մշակութային ինստիտուտները (կազմակերպություններ), որոնց միջոցով գործադիր մարմինն իրականացնում է մշակութային քաղաքականությունը: Առանձնացնենք մշակութային կազմակերպությունների 4 խումբ, որոնք զբաղված են՝

1. մշակութային ժառանգության պահպանման և կուտակման հարցերով՝ գրադարաններ, արխիվներ, թանգարաններ, պետական պատմամշակութային արգելոցներ և այլն:
2. Գեղարվեստա-ստեղծագործական գործունեությամբ, մշակույթի զարգացման և տարածման հարցերով՝ ստեղծագործական կոլեկտիվներ, միություններ ու միավորումներ, կինոստուդիաներ, թատրոններ, համերգային կազմակերպություններ, զանազան արհեստանոցներ, գրահրատակչությամբ և գրքերի առևտրով զբաղվող հիմնարկներ և այլն:
3. Ժամանցի կազմակերպմամբ՝ ակումբներ, խմբակներ, լուսավորչական ընկերություններ, մշակույթի տներ, ինչպես նաև որոշ տուրիստական կազմակերպություններ:
4. Գեղարվեստական կրթության հարցերով՝ արվեստի դպրոցներ, գեղագիտական դաստիարակության կենտրոններ և այլն:

Մշակութային քաղաքականության օբյեկտները նույնպես զանազան են: Դրանց շարքին է դասվում հենց մշակույթը, մարդու սոցիալ-մշակութային կենսագործունեության միջավայրը, ինչպես նաև մարդը, անհատը և ողջ հասարակությունը:

Մեր կարծիքով, պետական մշակութային քաղաքականության հիմնական նպատակը պետք է լինի ներդաշնակ զարգացած անհատի ձևավորումը և հասարակության միասնության ամրապնդումը: Այս նպատակներին հասնելու մեթոդների և միջոցների տարբերությունը պայմանավորված է ինչպես երկրի սոցիալ-քաղաքական, այնպես էլ հասարակության զարգացածության ընդհանուր մակարդակով:

Մշակութային քաղաքականության իրականացման համար կարևոր նշանակություն ունի պետական կարգավորման գործիքների (միջոցների) համակազմը.

- **օրենսդրական գործիքներ.** օրենքների մշակում, որոնք կարգավորում են կազմակերպությունների, անհատների գործունեությունը մշակույթի բնագավառում:
Ուսումնական պլաններում «Էկոլոգիա» առարկայի ներառման առաջին տարիներին ուսուցման գործընթացը կազմակերպվում էր ենթագիտակցաբար՝ առանց տեսական հենքի կամ որևէ մեթոդական ցուցումների: Ներկայումս էկոլոգիայի ուսուցման համար առկա է լիարժեք ձևավորված համակարգ, որպես մանկավարժական համակարգի և ուսումնադաստիարակչական գործընթացի անքակտելի մաս: Ինչպես ցանկացած դասընթացում, այնպես էլ էկոլոգիայում առանձնացված են հիմնական հասկացությունների խմբեր, որոնց վրա հենվում է ծրագրային բովանդակությունը: Էական է այդ հասկացությունների հակիրճ, բովանդակալից սահմանումն ու մատուցումը: Ցանկացած երկիմաստություն կամ անորոշ ձևակերպում կարող է խանգարել դրանց հստակ ընկալմանը, յուրացմանը, ինչը հետագայում կարող է հանգեցնել գիտական ձևակերպումների խեղաթյուրմանը [5]:

Այսպիսով, էկոլոգիական կրթությունը հանդես է գալիս որպես մանկավարժական համակարգի մաս, որի վրա ազդում են քաղաքական, մշակութային և սոցիալ-տնտեսական գործոնները:

Ընդհանուր կրթության համակարգում էկոլոգիայի ձևավորման և առանձին գիտության վերածման ուղղորդիչ գաղափարներն են.

- էկոլոգիական կրթության անընդհատությունը,
- սովորողի ինքնակրթության և ինքնադաստիարակության, ռեֆլեքսիայի, ինտելեկտի, բարոյական հատկությունների զարգացման հնարավորությունների ստեղծումը,
- սովորողի ինքնության զարգացման վրա հենված մոտեցումը, ինչը հնարավորություն է ընձեռում ստեղծել շփում, մոտիվացիա, համագործակցություն, ինչպես նաև համատեղ ստեղծագործելու միջավայրի առկայությամբ ուսումնական միջավայր,
- էկոլոգիական կրթության գործառույթի դիտարկումը, որպես մշակույթի զարգացման և գլոբալ ուղղորդված գիտական աշխարհայացքի ձևավորում,
- էկոլոգիական կրթական նպատակների դիտարկումը, որպես սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական առաջընթացի հրամայականի համատեքստում զարգացող սոցիալական նպատակների մաս,
- էկոլոգիայի դիտարկումը, որպես գլոբալ ուղղորդված աշխարհայացքի և մտածելակերպի ձևավորման աղբյուր:

Էկոլոգիական կրթության համակարգի բաղադրիչներ են հանդիսանում կրթության և դաստիարակության նպատակները, բովանդակությունն ու մոտիվացիան, դասավանդման և ուսումնառության գործընթացները, ուսումնամեթոդական և նյութատեխնիկական զուգակցումը, ինչպես նաև արդյունքները (աղ. 1):

Էկոլոգիական ուսումնական գործընթացը ներառում է ուսուցման և դաստիարակության ձևերն ու մեթոդները, ուսուցման միջոցները, էկոլոգիական գիտելիքի յուրացմանն ուղղված դասավանդողի և սովորողի գործունեությունը և սովորողների ձեռքբերումների վերահսկողությունը:

**Ուսումնադաստիարակչական գործընթաց**

<b>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍԿՉՐՈՒՆՔՆԵՐԸ</b>				
<b>Համակարգվածություն, գիտականություն, գիտակցվածություն և ակտիվություն, ուսումնական աշխատանքում խմբային և անհատական աշխատանքի ձևերի ռացիոնալ բաշխում, համակարգվածություն և հետևողականություն, օբյեկտիվություն, թափանցիկություն և հրապարակայնություն, հնքնուրույնություն, անձնական կողմնորոշում, ռեֆլեքսիա</b>				
<b>Ուսուցման ձևերը</b>	<b>Ուսուցման մեթոդները</b>	<b>Ուսուցման միջոցները</b>	<b>Ուսուցման նյութատեխնիկական և հիմքը/բազան</b>	<b>Ուսուցման տեխնոլոգիան</b>
<ul style="list-style-type: none"> <li>✓ Էկոլոգիայի դաս</li> <li>✓ Էկոլոգիական արահետ</li> <li>✓ Արտալսարանային պարապմունք</li> <li>✓ Տնային առաջադրանք</li> <li>✓ Էկոլոգիական պրակտիկա</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>✓ Խոսքային</li> <li>✓ Ակնառու</li> <li>✓ Գործնական</li> <li>✓ Բացատրական-ցուցադրական</li> <li>✓ Մասնակի որոնողական</li> <li>✓ Հետազոտական</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>✓ Բնական</li> <li>✓ Պատկերավոր</li> <li>✓ Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ և միջոցներ</li> <li>✓ Լաբորատոր</li> <li>✓ Վերբալ</li> <li>✓ Տեխնիկական</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>✓ Էկոլոգիայի լսարան</li> <li>✓ Ուսումնական հաստատության ուսումնափորձարական տեղամասում Էկոլոգիային հատկացված հատված</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>✓ Անձնակողմնորոշիչ</li> <li>✓ Ուսումնական գործընթացի կառավարման և կազմակերպման արդյունավետությանն ուղղված</li> <li>✓ Զարգացնող ուսուցման</li> </ul>
<b>Արդյունքները</b>				
<p>Սովորողների մոտ ձևավորված էկոլոգիական գիտելիք, կարողություն, բնության նկատմամբ արժեհամակարգ, համապատասխան վերաբերմունք, գիտական աշխարհայացք և էկոլոգիական մշակույթ</p>				

Այսպիսով, էկոլոգիայի ուսուցման գործընթացի արդյունավետությունը պայմանավորում է առարկայի կառուցվածքում ուսումնական թեմաների, տեսական և գործնական պարապմունքների, դասերի, էքսկուրսիաների և էկոլոգիական պրակտիկաների տրամաբանական հաջորդականությունը, իսկ սովորողների շրջանում կարողությունների զարգացման և դեպի հետազոտական աշխատանքը հետաքրքրության ձևավորման համար անհրաժեշտ է անհատական և խմբային արտալսարանային աշխատանքի կազմակերպում: Բացի այդ, ուսուցման միջոցների (հերբարիումներ, հավաքածուներ, էկոլոգիական այլ օբյեկտներ, տեխնիկական և դիդարկտիկ միջոցներ, լաբորատոր սարքավորումներ և այլն) ճիշտ պլանավորված կիրառմամբ կարելի է ակնկալել սովորողների մոտ կայուն գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորում:

**Գրականություն**

1. **Андреев М.Д.,** Экологическое воспитание и просвещение как эмоционально-ценностное отношение к природе // *Фундаментальные исследования.* №7, 2009. С. 76-78; URL: <https://fundamental-research.ru/ru/article/view?id=2174> (дата обращения: 20.02.2023).
2. <https://www.oxfordbibliographies.com/display/document/obo-9780199830060/obo-9780199830060-0154.xml> (Дата обращения: 20.02.2023).
3. **Краежский В.В.,** Общие основы педагогики. // *Высшее профессиональное образование.* – М., 2001. – 255 с.

4. **Зверев И.Д.**, Учебные исследования по экологии в школе: Методы и средства обучения. – М., 1993. – 19 с.
5. **Gevorgyan S., Adanalyan A.A.**, Comparision of Ecological Education and Sustainabe Development Education, In Addressing global environmental security through innovative educational curricula. Edited by S. Allen-Gil, L. Stelljes, and O Borisova, 57–63. Dordrecht, The Netherlands: Springer. 1993. – 19 p.

**С.Г. Бакунц**

### **ПРЕПОДАВАНИЕ ТЕОРИИ ЭКОЛОГИИ С ПЕДАГОГИЧЕСКОЙ ТОЧКИ ЗРЕНИЯ**

*В работе обосновывается современный императив экологического образования, его первостепенная роль в контексте необходимости расширения от системы “организм-среда” до “общество-биосфера”, представлена дифференциация экологического знания по критериям, раскрыты возможности отражения методов экологических исследований в учебно-исследовательской деятельности студентов, их связь с принципами образования и воспитания, а в конечном счете и с самим процессом формирования полноценного члена общества.*

**Ключевые слова:** экология, образование, методология, формирование мировоззрения, педагогическая наука.

**S.H. Bakunts**

### **POSSITION AND SIGNIFICANCE OF THE THEORY AND METHODOLOGY OF ECOLOGY IN PEDAGOGICAL SCIENCE**

*The paper substantiates the modern imperative of environmental education, its primary role in the context of the need to expand from the "organism-environment" system to "society-biosphere", presents the differentiation of environmental knowledge by criteria, reveals the possibilities of reflecting environmental research methods in the educational and research activities of students, their connection with the principles of education and upbringing and, ultimately, with the process of forming a full-fledged member of society.*

**Keywords:** ecology, education, methodology, worldview formation, pedagogical science.

**Բաղունց Սարենիկ Հրաչիկի** - գյուղ. գիտ. թեկնածու, դոցենտ (ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ).

*Ներկայացման ամսաթիվը՝ 13.03.2023*

*Գրախոսման ամսաթիվը՝ 21.03.2023*

Ս.Զ. Կրոյան, Լ.Զ. Բաղայան

**ԱՐԱԳԱԾԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԼԱՆՋԻ ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ  
ՕԴԱԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ԵՎ ՏԻԵԶԵՐԱՆԿԱՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ 9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ**

Հողվածում քննարկվում է ՀՀ Արագածի հարավային լանջի հողային ծածկույթի ուսումնասիրման խնդիրները դաշտային պայմաններում և արբանյակային օդալուսանկարների կիրառմամբ՝ 9-րդ դասարանի Հայաստանի աշխարհագրության դասընթացում: Ավագ դպրոցի դասապրոցեսում հնարավոր է օգտագործել դպրոցական աշխարհագրական տեղեկատվական համակարգ (ԱՏՀ), ինչը աշակերտին և ուսուցչին հնարավորություն է տալիս կառավարել տեղեկատվական հոսքը: Ժամանակակից տեխնիկական միջոցները հնարավորություն են տալիս մոդելավորելու աշխարհագրական երևույթներն ու գործընթացները, պատկերավոր ներկայացնելու երևույթների դինամիկան՝ դրա էությունը:

Դաշտային ուսումնաճանաչողական էքսկուրսիայի պայմաններում Արագած լեռնավահանի հարավային լանջի հողաաշխարհագրական հետազոտությունների և արբանյակային նկարների համադրման միջոցով կատարվել է տվյալ տարածքի հողերի ուսումնասիրություններ:

Հանրակրթական դպրոցներում դպրոցական ԱՏՀ-ի կիրառումը կնպաստի աշակերտների մոտ անվտանգության մշակույթի ծնավորմանն ու զարգացմանը:

**Առանցքային բառեր.** հողային ծածկույթ, օդալուսանկար, տիեզերանկար, վերընթաց գույրակա-նություն, լուսանկարների վերծանում, աշխարհագրական տեղեկատվական համակարգ:

Արդի ժամանակաշրջանում գիտության և տեխնիկայի բուռն առաջընթացի պայմաններում շատ է կարևորվում արբանյակային նկարների կիրառումը դպրոցական դասապրոցեսի արդյունավետ կազմակերպման գործընթացում: Արբանյակային տարագույն նկարներն աշակերտների մոտ առաջացնում են հետազոտական հետաքրքրություն, շրջապատի նորովի ընկալում, նպաստում են համակարգչային գիտելիքների ուսուցմանը: Զուգակցելով գաղափարական և ընկալման ազդակները՝ աշակերտը կարող է պարզ, դիզակտիկ օրինակների հիման վրա ներկայացնել բարդ երևույթները: Պատկերների զննումը, ուսումնասիրումը նրանց մոտ զարգացնում է ինքնուրույն վերլուծելու կարողություն, հետազոտելու ունակություն: Անհրաժեշտ տեղեկատվության ստացումը միաժամանակ նպաստում է ստեղծագործական մտածողության զարգացմանը՝ աշխարհագրական օբյեկտների, բնության երևույթների և դրանց փոխադարձ կապերի բացահայտմանը:

Հետազոտության նյութ է ծառայել դպրոցական աշխարհագրության դասընթացում արբանյակային նկարների և օդալուսանկարահանման կիրառմամբ Արագածի հարավային լանջի հողային ծածկույթի ուսումնասիրությունը: Հետազոտության օբյեկտ է հանդիսացել Արագած լեռնավահանի հարավային լանջի հողատեսքերը:

Ուսումնական գործընթացում արբանյակային նկարները և օդալուսանկարները օգտագործվել են վերջին շրջանում: Տիեզերական տեխնոլոգիաների օգնությամբ ստացվող տեղեկատվությունը ստանալու և կրթական նպատակներով օգտագործման համար գործում են համացանցային կայքեր, որտեղից կարելի է ներբեռնել արբանյակային նկարներ, էլեկտրոնային գրքեր, մեթոդական ցուցումներ, օգտվել տեղեկատվական շտեմարաններից և այլն [1]: Արբան-

յակային նկարները կրթական համակարգում օգտագործելու գլխավոր նախապայմանը ճիշտ լրակազմված և կահավորված համակարգչային դասարանն է: Բոլոր աշակերտներին պետք է հասու լինի անհատական համակարգիչ, ընդ որում՝ դասարանի բոլոր համակարգիչները, ներառյալ ուսուցչինը պետք է ունենան նույն օպերացիոն համակարգը և ծրագրային փաթեթները, նախընտրելի է *կայքային համակարգը*:

Ավագ դպրոցի դասապրոցեսում հնարավոր է օգտագործել դպրոցական ԱՏՀ-ը: Այն աշակերտին և ուսուցչին հնարավորություն է տալիս կառավարել տեղեկատվական հոսքը՝ շեշտադրելով առավել հետաքրքրական ու բարդ մասերը: Փոխներգործուն միջոցները հնարավորություն են տալիս մոդելավորելու աշխարհագրական երևույթներն ու գործընթացները, պատկերավոր ներկայացնելու երևույթների դինամիկան՝ դրա էությունը:

*Արբանյակային օդալուսանկարների միջոցով հողաձածկի ուսումնասիրությունը ընդգրկում է երկու խնդիր՝*

1. հողատեսքի աշխարհագրական տարածվածության ուսումնասիրություններ և քարտեզագրում,
2. հողերում ընթացող դինամիկ գործընթացների հետազոտում:

*Արբանյակային նկարների միջոցով* հողերի առաջնային ուսումնասիրություններ կարելի է կատարել ուղղակի վերձանման ճանապարհով: Այս եղանակն առավել արդյունավետ է հերկված հողերի ուսումնասիրման համար: Այն հնարավորություն է տալիս ուսումնասիրել նաև արդեն ծլարձակված հացահատիկային և այլ վարելահողային մշակաբույսերի ցանքատարածություններում, երբ բույսերի բարձրությունը չի գերազանցում 10-20սմ-ը: Հնարավոր են ուսումնասիրություններ նաև նոսր՝ 10-15% բուսականությամբ ծածկված տարածքներում:

Հողաձածկի ճառագայթման գունային երանգը փոփոխվում է լուսակի (սպեկտր) բավականին լայն տիրույթում սկսած սպիտակ գույնից (աղուտ և ալկալի հողեր) մինչև սևը (սևահողեր): Պետք է նկատել, որ նկարներում արձանագրվում է միայն հողի վերին շերտից անդրադարձող լույսը: Պատկերի գունային արտահայտությունն անմիջական կապի մեջ է տվյալ պահին հողերի ֆիզիկական վիճակի, օրինակ՝ խոնավության հետ: Նման իրավիճակներում արբանյակային նկարների պարզ վերձանումը նվազ արդյունավետ է նույնիսկ վարելահողերի դեպքում:

Օդալուսանկարի վրա հողաձածկի ուսումնասիրման համար առավել արդյունավետ է այսպես կոչված անուղղակի ցուցիչների կամ ինդիկատորների կիրառման մեթոդը: Անուղղակի ցուցիչ կարող են հանդիսանալ ռելիեֆը, բուսականությունը, հողաձածկի անդրադարձման գործոնները, հողերի որակական հատկանիշները [3]:

Անուղղակի ցուցիչներից են նաև մարդու գործունեությամբ պայմանավորված փոփոխությունները: Իբրև օրինակ կարող են դիտարկվել հողապաշտպան, հակաէրոզիոն ցանքերը, շարային եղանակով մշակվող կուլտուրաները և այլն: Վարելահողերը հստակ ընդգծվում են անտառային բուսականության հարևանությամբ, շնորհիվ գունաերանգային և պայծառության հակադրության:

Վերը նշված լուծումները հնարավորություն են տալիս նկարների վերլուծության միջոցով կազմել տարածքի հողաձածկի ավելի ճշգրիտ և մանրամասն քարտեզներ, քան ավանդական մոտեցումներով: Այս եղանակով հնարավոր է կազմել հողերի 1:1 000 000 մինչև 1:2 500 000

մասշտաբի քարտեզներ: Առավել արդյունավետ է 1:1 000 000 -ից մինչև 1: 100 000 մասշտաբի քարտեզների կազմումը ԱՏՀ համակարգերի օգնությամբ: Այս դեպքում քարտեզների վերծանման միջոցով ստացվող տվյալները հիմք են հանդիսանում հետագա վերլուծությունների և կանխատեսումների համար:

Մարդու տնտեսական գործունեությունը բավականին լուրջ ազդեցություն ունի հողերի դինամիկ գործընթացներում: Դրանով պայմանավորված անհրաժեշտություն է առաջանում հողերում զարգացող գործընթացների դինամիկայի ուսումնասիրումը, օգտագործման, հողաբարելավման գործընթացների պլանավորումը, անցանկալի զարգացումների և դրանց կանխարգելման ուղիների որոնումը: Թվարկված խնդիրների վերհանման ցուցիչներն են՝ հողերի հումուսայնությունը, աղակալվածությունը, խոնավության պարունակությունը և այլ հատկություններ: Այս ցուցիչների օգնությամբ արբանյակային նկարների միջոցով կարելի է վերծանել ոչ միայն որակական այլև քանակական տվյալներ:

Արբանյակային նկարներում հողի մակերևութային ողողումներն արտահայտվում են ջրային էրոզիայի միջոցով: Այն ներկայանում է բաց գույնի բծերի ձևով, ընդ որում բաց գույնի կամ լուսավոր բծերը մակերևութի ուռուցիկ մասերի ողողված, վացված հատվածներն են, իսկ մուգ սև երանգները ջրաբերուկներն ու հողի զանգվածի կուտակումներն են: Վերծանման ժամանակ հաշվի են առնվում նաև ռելիեֆի ձևաչափական առանձնահատկությունները՝ լանջերի թեքությունը, մասնատվածությունը, կողմնադրությունը, հողատիպը, բուսատեսակները, տեղումները, քամիների ուղղությունը և այլն: Տվյալների նման բազմազանությունը լիարժեք և հիմնավոր արտահայտություն են ստանում ԱՏՀ քարտեզներում [5, 6]:

Ուսումնասիրելով «Հայաստանի Աշխարհագրություն» դասընթացի տարբեր դասարաններում կազմված թեմատիկ պլանները, պարզվում է, որ հողերի ուսումնասիրությանը յուրաքանչյուր դասարանում հատկացված է 1 ժամ [2]:

9-րդ դասարանի «Հայաստանի աշխարհագրություն» դասընթացում «ՀՀ հողային ծածկույթը» թեման ուսումնասիրելու համար առաջարկում ենք նոր մեթոդ արբանյակային նկարների կիրառմամբ, որն առավել արդիական է և կմեծացնի աշակերտների հետաքրքրությունը դասընթացի նկատմամբ [1]: Կբարձրանա ինքնակրթության մակարդակը, ուսումնական գործունեության մոտիվացիան, ինչպես նաև կտա նոր ստեղծագործելու հնարավորություններ (նկ. 1, 2, 3) [7, 8]:



**Նկ. 1. Արագածի հարավային լանջի ընտրված տեղամասի արբանյակային նկարը**







էքսկուրսիաների նպատակն աշակերտների մոտ գիտական և տարածական մտածողության տարրերի ձևավորումն է, հայրենագիտական դաստիարակությունը, էկոլոգիական գրագիտությունը և անձնային որակների ձևավորումը, որոնք կնպաստեն աշակերտների անվտանգության մշակույթի ձևավորմանը: Այդ իմաստով, դպրոցական էքսկուրսիաների ընթացքում աշակերտների կողմից կատարվող դաշտային դիտարկումները պետք է լինեն հստակ պլանավորված, ունենան հստակ նպատակաուղղվածություն և դրված լինեն մեթոդական ճիշտ հիմքի վրա: Այդ հարցում շատ կարևոր է էքսկուրսիայի անցկացման տեղավայրի և համապատասխան ուղիների ճիշտ ընտրությունը: Դրանք պետք է համապատասխանեն դպրոցական աշխարհագրական էքսկուրսիաների նպատակներին, արտացոլեն բնության բաղադրիչների փոխադարձ կապերն ու փոխալսման ավորվածությունը: Այդ առումով, Արագած լեռնազանգվածի հարավային լանջերի բնատարածքային համալիրների ու դրանց բաղադրիչների դաշտային դիտարկումները հուսալի արդյունք կարող են ապահովել աշակերտների թե՛ գիտական ու տարածական մտածողությանը, և թե՛ հայրենագիտական, գեղագիտական ու էկոլոգաբնապահպանական դաստիարակության գործում:

Արբանյակային նկարների վերծանման դասարանային գործնական աշխատանքների ընթացքում աշակերտների ձեռք բերած պատկերային գիտելիքները հնարավորություն են ընձեռում կատարելու բնական դիտարկումներ և համապատասխան եզրահանգումներ: Այդ նկատառումով որպես նպատակային հետազոտության տարածք է ընտրվել՝ Երևան - Աշտարակ - Բյուրական - Անտառուտ - Արքաշենի հովիտ - Քարի լիճ Արագածի հարավային գագաթ երթուղին:

Էքսկուրսիայի ընթացքում ուսուցչի կողմից ընտրվում են հանգուցային տեղամասեր, որտեղ աշակերտները կատարելու են ուսումնասիրություններ: Այսպիսով, էքսկուրսիայի շնորհիվ ուժեղանում է աշխարհագրության ուսուցման գործնական ուղղվածությունը, ընդլայնվում աշխարհայացքը, խորանում են աշխարհագրական գիտելիքները, կատարելագործվում կարողությունները, հարստանում է կյանքի փորձը, ձևավորվում կոնկրետ պատկերային մտածողությունը, ինչն էլ հիմք կծառայի հետագայում տեսական գիտելիքների, փոխադարձ կապերի, օրինաչափությունների ձևավորման յուրացման համար:

Ամփոփելով աշխատանքը հանգել ենք հետևյալ եզրակացության՝

**Հայաստանի Աշխարհագրության *դասին արբանյակային ուսումնասիրությունը աշակերտներին հնարավորություն կպատասխանի***

- որոնողական համակարգով էլեկտրոնային քարտեզներում աշխարհագրական օբյեկտների հայտնաբերմանը,
- գործնականում արբանյակային տիեզերանկարի և էլեկտրոնային քարտեզի թեմատիկ շերտերի համադրմամբ ստանալու տեղանքի իրական պատկերը,
- ձևավորելու էլեկտրոնային քարտեզի վրա չափումներ և հաշվարկներ կատարելու ունակություն,
- արբանյակային նկարների կիրառումը աշակերտներին կտա մեծ հնարավորություն առավելագույնս յուրացնելու հողերի մասին առկա տեղեկատվությունը (նկ. 4) և կծառայի իրենց գիտելիքների կատարելագործմանը, աշխարհագրության նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը,

- ավանդական կրթական մեթոդների փոփոխում, նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում, որոնք կբարձրացնեն հանրակրթական դպրոցում Հայաստանի Աշխարհագրություն դասընթացի ուսուցման արդյունավետությունը,
  - դասի ընթացքում արբանյակային տիեզերանկարների պատկերների կիրառում, որոնք աշակերտների մոտ կառաջացնեն հետազոտական հետաքրքրություն, շրջապատի նորովի ընկալում, կնպաստեն համակարգչային գիտելիքների ուսուցմանը,
  - Հայաստանի Աշխարհագրություն դասընթացի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու և աշակերտների աշխարհայացքն ընդլայնելու նպատակով անհրաժեշտ է նրանց առաջարկել համակարգչային տեխնոլոգիաների գործածությամբ ստեղծագործական, ինքնուրույն տնային աշխատանքներ:
- Այսպիսով, հանրակրթական դպրոցներում նման ծրագրերի կիրառումը կնպաստի աշակերտների մոտ անվտանգության մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը:

### Գրականություն

1. **Մանասյան Մ.**, Հովսեփյան Ա., Աշխարհագրություն. Հայաստան, Հանրակրթական դպրոցի 9-րդ դաս., Դասագիրք, Եր., Տիգրան Մեծ հրատ., 2014. - 240 էջ:
2. **Մինասյան Ա.Ա.**, Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա, Եր., «Էդիկ Թանգյան», 2013.- 360 էջ:
3. **Новенко Д.В.**, Петрова Н.Н., Симонов А.В., Смирнова Е.В., Информационный источник сложной структуры «Использование школьной ГИС», Методическое пособие для учителя географии, М., 2008.
4. [www.atlas.edu.ru](http://www.atlas.edu.ru) (Դիտում՝ 16.03.2022).
5. <https://geology.com/google-earth/> (Դիտում՝ 03.04.2022).
6. <https://earth.google.com/web/@48.856391,2.352212,0a,70000d,35y,0h,0t,0r> (Դիտում՝ 03.04.2022).
7. <http://earthviewmaps.com/#bookmark> (Դիտում՝ 05.04.2022).
8. <https://gis.utah.gov/data/usgs-scanned-topographic-maps/> (Դիտում՝ 02.05.2022).

### С.З. Кроян, Л.З. Бадалян

## ИЗУЧЕНИЕ ПОЧВЕННОГО ПОКРОВА ЮЖНОГО СКЛОНА ГОРЫ АРАГАЦ С ИСПОЛЬЗОВАНИЕМ АЭРО И КОСМИЧЕСКИХ СЪЕМОК ПО ПРЕДМЕТУ ГЕОГРАФИЯ АРМЕНИИ ДЛЯ 9-ГО КЛАССА

*В статье рассматриваются проблемы изучения почвенного покрова южного склона горы Арагац Республики Армения в полевых условиях с использованием аэрофото и космических снимков по предмету география Армении для 9-го класса.*

*В программе средней школы возможно использование школьной ГИС, которая позволяет учащемуся и учителю контролировать поток информации. Современные технические средства позволяют моделировать географические явления и процессы, графически представлять динамику явлений, их сущность.*

*В условиях полевой учебно-познавательной экскурсии проведены почвенные исследования данной местности путем совмещения почвенно-географических исследований и космических снимков южного склона хребта горы Арагац.*

*Использование школьных ГИС в общеобразовательных школах будет способствовать формированию и развитию культуры безопасности у учащихся.*

**Ключевые слова:** почвенный покров, аэрофотосъемка, космическая съемка, вертикальная поясность, дешифрование фотоснимков, Геоинформационная система (ГИС).

**S.Z. Kroyan, L.Z. Badalyan**

## **THE STUDY OF THE LAND COVER OF THE SOUTHERN SLOPE OF ARAGATS USING AERIAL PHOTOGRAPHS AND SPACE PHOTOGRAPHS IN THE ARMENIAN GEOGRAPHY 9<sup>TH</sup> CLASS COURSE**

*The article discusses the problems of studying the land cover, using aerial and satellite images in the subject of Geography of Armenia for the 9th class. It is possible to use geographic information system (GIS) in the teaching process of a high school, which gives the student and the teacher an opportunity to manage the information flow. Modern technical means make it possible to model geographical phenomena and processes, to graphically present the dynamics of phenomena, its essence.*

*Under the conditions of the educational and educational excursion fields, soil studies of this area were carried out by combining soil-geographic studies and satellite images of the southern slope of the Aragats mountain range.*

*The application of GIS in secondary schools will contribute to the formation and development of the safety culture of students.*

**Key words:** land cover, aerial photography, space picture, upward zonality, photo decoding, Geographic Information System (GIS).

**Կրոյան Սամվել Զալիբեկի** – գյուղ. գիտ. թեկնածու, դոցենտ (ՃՇՀԱՀ).

**Բադալյան Լարիսա Զալիբեկի** – ուսուցիչ (Երևանի Ա. Նավասարդյանի անվ. թիվ 196 հիմնական դպրոց).

*Ներկայացման ամսաթիվը՝ 17.02.2023*

*Գրախոսման ամսաթիվը՝ 28.03.2023*

Т.Ю. Адаева, В.П. Ватутина, Е.О. Ключева, Е.Н. Кострина

## МЕЖРЕГИОНАЛЬНАЯ ДИСТАНЦИОННАЯ ОЛИМПИАДА ПРОФЕССИОНАЛЬНОГО МАСТЕРСТВА ПО УКРУПНЕННОЙ ГРУППЕ СПЕЦИАЛЬНОСТЕЙ СРЕДНЕГО ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ «ТЕХНОСФЕРНАЯ БЕЗОПАСНОСТЬ И ПРИРОДООБУСТРОЙСТВО» КАК СОВРЕМЕННАЯ И МОБИЛЬНАЯ СИСТЕМА ОЦЕНКИ КВАЛИФИКАЦИИ ВЫПУСКНИКОВ

*В статье рассмотрены вопросы организации и проведения межрегиональной дистанционной олимпиады профессионального мастерства по укрупненной группе специальностей среднего профессионального образования 20.00.00 «Техносферная безопасность и природообустройство» с международным участием. Целями и задачами данного мероприятия стало выявление одаренной молодежи в области техносферной безопасности и повышение качества среднего профессионального образования студентов образовательных учреждений Республики Татарстан; проверка способности курсантов к самостоятельной профессиональной деятельности, совершенствование умений эффективного решения профессиональных задач.*

**Ключевые слова:** олимпиада, дистанционные технологии, оценка квалификации, дистанционное обучение, дистанционный экзамен.

Третий учебный год на базе Тетюшского государственного колледжа гражданской защиты организуется и достаточно успешно реализуется образовательный проект межрегиональной дистанционной олимпиады профессионального мастерства по укрупненной группе специальностей среднего профессионального образования 20.00.00 «Техносферная безопасность и природообустройство» с международным участием.

Профильное направление 20.00.00 Техносферная безопасность и природообустройство: 20.02.02 «Защита в чрезвычайных ситуациях»; 20.02.04 «Пожарная безопасность».


Целями и задачами данного мероприятия стало выявление одаренной молодежи в области техносферной безопасности и повышение качества среднего профессионального образования студентов образовательных учреждений Республики Татарстан; проверка способности курсантов к самостоятельной профессиональной деятельности, совершенствование умений эффективного решения профессиональных задач.

Олимпиада проводится в соответствии с календарным планом мероприятий Министерства образования и науки Республики Татарстан, в соответствии с частью 2 статьи 77 и частью 22 статьи 34 Федерального закона Российской Федерации «Об образовании в Российской Федерации» № 273-ФЗ от 29.12.2012 г. и направлена на поддержку творческого потенциала педагогических работников и обучающихся. Конкурсы разработаны с учетом требований Федеральных государственных стандартов образования (ФГОС).

Благодаря цифровым технологиям в олимпиаде принимали участие команды из самых различных регионов Российской Федерации: Республики Татарстан (г. Казань, г. Тетюши, г. Мамадыш, г. Билярск), Чувашской Республики (г. Чебоксары), Республики Башкортостан (г. Уфа), Пермского края (г. Пермь и г. Кунгур), Ростовской области (г. Таганрог и г.

Новочеркасск), Липецкой области (г. Усмань), а также международные участники - Республика Армения (г. Ереван) и Республика Казахстан (г. Семей).

Открытие Олимпиады с участием всех команд, членов жюри и организационного комитета проходило в режиме видеоконференции в Zoom или на платформе Discord, которая была использована в работе олимпиады в 2020 году. Каждая команда презентовала ролик-визитную карточку, в которой представила свой город и образовательное учреждение.



**Рис. 1. Команда Республики Армении на открытии Олимпиады в 2022 г.**

Принять участие в олимпиаде можно было с любого устройства. Видеосвязь осуществляется через ПО Zoom, для тестирования был необходим любой браузер и зарегистрированный аккаунт в QUIZZZ.



**Рис. 2. Открытие Олимпиады в декабре 2022 г.**

Основные блоки заданий олимпиады были связаны с профильными и базовыми знаниями, умениями и навыками, которыми должны обладать современные спасатели, а также, поскольку олимпиада имеет международный статус, – английского языка, имеющего статус официального и рабочего языка.

Особый акцент на знание английского языка будущими спасателями и пожарными был сделан еще и в связи с тем, что одним из критериев к поисково-спасательным отрядам ИНСАРАГ является наличие персонала, свободно владеющего английским языком.

Во время олимпиады 2020 года с целью моделирования ситуации по проведению поисково-спасательных работ с участием представителей различных стран и организаций было проведено распределение участников по командам для групповых туров путём случайного выбора на сайте <https://ultragenerator.com/splitgroups/>.

Таким образом, была смоделирована ситуация, требующая от участников олимпиады продемонстрировать не только навыки монологической речи (самопрезентация на английском языке), но и способности организовать общение с собеседником, выстроить диалог на иностранном языке.

На олимпиаде 2021 года была реализована идея, основанная на решении ситуационной задачи по организации и консультированию по оказанию доврачебной помощи пострадавшему на английском языке.

В 2022 году задание на английском языке заключалось в интервьюировании членами команды друг друга о профессиональном выборе и особенностях обучения профессии «Спасатель».

Выполнение заданий было организовано как в режиме онлайн, так и с использованием средств видеофиксации, материалы которой оценивало компетентное жюри, в составе представителей Казанского национального исследовательского технического университета, Министерства чрезвычайных ситуаций Республики Татарстан и организаций-работодателей во главе с доктором педагогических наук, профессором Казанского национального исследовательского технологического университета (КНИТУ-КАИ) Еленой Викторовной Муравьёвой.

Теоретическое тестирование также было успешно проведено с использованием дистанционных технологий. Все необходимые инструкции к подключению и использованию, а также критерии оценок были разосланы участникам заранее.



**Рис. 3. Команды «Тетюшского государственного колледжа гражданской защиты», Республика Татарстан на Олимпиаде 2022 г.**

Накануне Олимпиады проводятся пробные сеансы связи, что позволяет практически полностью исключить сбои в работе и провести дистанционную олимпиаду на высоком уровне.

В основе идеи Олимпиады изначально были заложены не конкуренция, соревнование и соперничество, а, напротив, сотрудничество профессионалов в области техносферной безопасности по образу и подобию сообщества стран и организаций ИНСАРАГ, которое было создано в 1991 году по инициативе международных поисково-спасательных работ, проведённых после землетрясения в Армении в 1988 году (и очень символично, что мы на этой Олимпиаде снова вместе).

Применение технологии ИНСАРАГ – интернациональной поисково-спасательной организации, которая в своём арсенале имеет большое количество консультативных групп и благодаря этому использует разнообразные методики для реализации поисково-спасательных работ (ПСР) максимально приближает будущих спасателей к той реальной консультативной работе при выборе методики для осуществления ПСР. Учитывая то, что в разных образовательных учреждениях преподаватели используют разнообразное оборудование и различные технологии – было интересно и познавательно обменяться таким опытом.

Поведение поисково-спасательных работ в районах крупномасштабных катастроф невозможно без общей координации и использования единой методики.

В ходе олимпиады ребята не только соревнуются друг с другом в знаниях английского языка, профессиональных дисциплинах, физической подготовленности, но и знакомятся друг с другом, делятся опытом, сотрудничают.

Результаты Олимпиады, представлены всем участникам в сводном и итоговом протоколах. Апелляций по итогам организаторам не поступало. В отзывах все участники высказали одобрение проведённым мероприятиям и его организации, а также выразили пожелания продолжать проведение Олимпиады на базе нашего колледжа ежегодно.

В заключение следует отметить интересный опыт, накопленный за последние годы Государственной академией кризисного управления МЧС РА, с которым любезно поделились наши коллеги из Армении, в использовании технологий и методов дистанционного обучения в деле воспитания культуры безопасности как у учащихся так и среди населения, а также возможности использования новых технологий в процессе обеспечения непрерывного образования в чрезвычайных ситуациях как, например, в период пандемии COVID-19, а также активное вовлечение студентов и учащихся Академии в международных учениях, организуемых в рамках ИНСАРАГ.

## Литература

1. **Федеральный** закон от 29 декабря 2012 г. № 273-ФЗ «Об образовании в Российской Федерации» (Собрание законодательства Российской Федерации, 2012, № 53, ст. 7598; 2020, № 9, ст. 1137).
2. **Порядок** применения организациями, осуществляющими образовательную деятельность, электронного обучения, дистанционных образовательных технологий при реализации образовательных программ, утвержденным приказом Министерства образования и науки Российской Федерации от 23 августа 2017 г. № 816 (зарегистрирован Министерством юстиции Российской Федерации 18 сентября 2017 г., регистрационный № 48226).



Տ.Յու. Ադաևա, Վ.Պ. Վատուտինա, Ե.Օ. Կլյուևա, Ե.Ն. Կոստրինա

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
(«ՏԵԽՆՈԼՈՐՏԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒՄ»)  
ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ԽՄԲՈՒՄ ՄԻՋՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԵՌԱՎԱՐ  
ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺԱԿԱՆ ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ, ՈՐՊԵՍ  
ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎ ՇԱՐԺՈՒՆԱԿ  
ՀԱՄԱԿԱՐԳ**

Հոդվածում դիտարկվում են միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների (20.00.00 «Տեխնոլորտային անվտանգություն և բնապահպանում») խոշորացված խմբում միջտարածաշրջանային հեռավար միջազգային մասնակցությամբ օլիմպիադայի կազմակերպման և անցկացման հարցերը: Տվյալ միջոցառման նպատակները և խնդիրները հանդիսանում են. տեխնոսֆերային բնագավառում շնորհալի երիտասարդության բացահայտումը և Թաթարստանի Հանրապետության ուսումնական հաստատությունների ուսանողների միջին մասնագիտական կրթության որակի բարձրացումը, կուրսանտների ինքնուրույն արհեստավարժական գործունեության ընդունակության ստուգումը, արհեստավարժական խնդիրների արդյունավետ լուծման կարողությունների կատարելագործումը:

**Առանցքային բառեր.** օլիմպիադա, հեռավար տեխնոլոգիաներ, որակավորման գնահատում, հեռավար ուսուցում, հեռավար քննություն:

T.Yu. Adaeva, V.P. Vatutina, E.O. Klyuyeva, E.N. Kostrina

**INTERREGIONAL DISTANCE OLYMPIAD OF PROFESSIONAL SKILLS ON THE  
ENLARGED GROUPS OF SPECIALTIES OF SECONDARY VOCATIONAL EDUCATION  
“TECHNOSPHERE SAFETY AND NATURE ARRANGEMENT” AS A MODERN AND  
MOBILE SYSTEM OF ASSESSMENT OF QUALIFICATION OF GRADUATES**

The article deals with the issues of organization and conduction an interregional distance Olympiad of professional skills in an enlarged group of specialties of secondary vocational education 20.00.00 "Technospheric Safety and Nature Arrangement" with international participation. The goals and objectives of this event were to identify gifted youth in the field of technosphere safety and improve the quality of secondary vocational education for students of educational institutions of the Republic of Tatarstan; checking the ability of cadets to independent professional activities, improving the skills of effectively solving professional problems.

**Key words:** olympiad, distance technologies, qualification, assessment, distance learning, distance exam.

**Адаева Татьяна Юрьевна** – заслуженный учитель Республики Татарстан, преподаватель ГАПОУ «Тетюшский государственный колледж гражданской защиты».

**Ватутина Виктория Петровна** - преподаватель ГАПОУ «Тетюшский государственный колледж гражданской защиты».

**Клюева Екатерина Олеговна** - преподаватель ГАПОУ «Тетюшский государственный колледж гражданской защиты».

**Кострина Елена Николаевна** - преподаватель ГАПОУ «Тетюшский государственный колледж гражданской защиты».

Дата представления: 16.03.2023

Дата рецензии: 21.03.2023



Ռ.Գ. Ղարիբյան

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» ԱՌԱՐԿԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՐԹԱԿԱՆ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Հողվածում հեղինակը ներկայացնում է ուսուցման ժամանակակից կրթական տեխնոլոգիաները, «Իրավունքի հիմունքներ» առարկայի դասավանդման գործընթացում նորարարական կրթական տեխնոլոգիաների ներդրման նշանակությունը, դասավանդման գործընթացում ժամանակակից տեխնոլոգիաները, կիրառության հիմնական սկզբունքները, դասագործընթացների կազմակերպման հիմնական ձևերը, Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում «Իրավունքի հիմունքներ» առարկայի դասավանդման ուղղությամբ ուսումնական գործընթացի կազմակերպման հեղինակի կողմից կիրառված նորարարական տեխնոլոգիաները:

**Առանցքային բառեր.** իրավունքի հիմունքներ, հեռավար կրթություն, մանկավարժական տեխնոլոգիա, կրթական տեխնոլոգիա, ուսուցման տեխնոլոգիա, տեխնոլոգիաների արդյունավետություն:

Այսօր «Իրավունքի հիմունքներ» առարկայի դասավանդման գործընթացում նորարարական կրթական տեխնոլոգիաների ներդրումն ունի որոշիչ նշանակություն, նկատի ունենալով, որ ժամանակակից կրթական տեխնոլոգիաները պետք է ուղղված լինեն ապագա մասնագետների իրավագիտակցության զարգացմանը:

Ներկայումս, ուսումնական գործընթացի արդիականացման պայմաններում դասախոսները և ուսանողները կարող են առավել ակտիվ օգտվել հեռավար տեխնոլոգիաներից: Ընդհանուր առմամբ, հեռավար կրթական տեխնոլոգիաները հասկացվում են որպես այնպիսի կրթական միջոցներ, որոնց իրականացման գործընթացը տեղի է ունենում հիմնականում տեղեկատվական և հեռահաղորդակցական ցանցերի օգտագործմամբ:

Ըստ կրթական ծրագրի՝ առանձնանում են կոմպետենտության հետևյալ բաղադրիչները՝ իմանալ, կարողանալ և տիրապետել: Կոմպետենցիաների ձևավորման հիմք որպես, կծառայի «Իրավունքի հիմունքներ» առարկայի ուսումնասիրությունը, և ձեռք բերված այդ գիտելիքները կօգնեն ուսանողներին բացահայտել իրենց ինտելեկտուալ և ստեղծագործական կարողությունները: Կրթական տեխնոլոգիայի ներքո ընդունված է հասկանալ դասախոսի և ուսանողների փոխկապակցված գործունեություն, որը հիմնված է հատուկ սկզբունքների և կրթության նպատակների, բովանդակության, մեթոդների և միջոցների փոխհարաբերությունների կոնկրետ հայեցակարգի վրա:

Կրթական տեխնոլոգիաները մշակվում են մանկավարժագիտության կողմից և ներմուծվում ուսումնական հաստատությունների մանկավարժական պրակտիկայում, իսկ կրթական գործընթացում կրթական տեխնոլոգիաների կիրառության հիմնական նպատակն է բարձրացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը, զարգացնել ուսանողի անհատականությունը, պրոֆեսիոնալիզմը և սոցիալական հարմարվողականությունը [1]:

Մեր կողմից, ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում «Իրավունքի հիմունքներ» առարկայի դասավանդման գործընթացում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառությունը հիմնված են հետևյալ հիմնական սկզբունքների վրա.

1. «Իրավունքի հիմունքներ» առարկայի դասավանդման տարբերակվածություն և այլընտրանքային տարբերակների առկայություն:

Դա նշանակում է, որ տվյալ առարկայի դասավանդման ոլորտում կան որոշակի տարբեր մոտեցումներ և դրանք գործնականում գործածվում են անձնակողմնորոշիչ և ուսանողակենտրոն տեսանկյունից, որը երաշխավորում է առարկայի դասավանդման անհատականացումը: Դասախոսն աշխատում է յուրաքանչյուր ուսանողի հետ՝ հաշվի առնելով նրա պատրաստվածության մակարդակը, որով նա եկել է ուսումնական հաստատություն, ինչպես նաև նյութը յուրացնելու նրա ընդունակությունները:

Անձնակողմնորոշիչ մոտեցումը երաշխավորում է իրավագիտության դասավանդման անհատականացումը:

2. Ուսանողների ճանաչողական գործունեության ակտիվացման ամենաբարձր մակարդակը: Այստեղ շեշտադրվում է ուսանողի կենսափորձը. նա պետք է ինքնուրույն սովորի, գտնի անհրաժեշտ նյութը և ակտիվորեն մասնակցի ուսումնական գործընթացին: Որպեսզի մասնագիտական եզրույթները բարդ չթվան և ավելի լավ ըմբռնվեն, անհրաժեշտ է ընդլայնել ուսուցանվող նյութի շրջանակն իրական կյանքի իրավիճակներով, որոնց ուսանողը մասնակից կլինի:

3. Դասավանդման գործընթացի մասնակիցների դրական հույզերի վրա հիմնված կրթություն՝ «դասախոս-ուսանող» երկխոսության համագործակցության ձևավորման միջոցով: Դասավանդումը կարող է արդյունավետ լինել միայն դասախոսի և ուսանողի փոխհամաձայնեցված, միմյանց նկատմամբ հարգալից վերաբերմունքի հիման վրա:

4. Իրավական նորմերի ուսուցման մասնագիտական բազմաստիճան մոդելի ձևավորում: Դա նշանակում է, որ իրավական նորմերի ուսուցումը պետք է լինի փուլային և աստիճանական՝ սկսած մանկությունից, այն պետք է շարունակվի դպրոցում, բուհում և դրանից դուրս:

5. Հետազոտական մեթոդի օգտագործումը դասախոսի և ուսանողի համակարգված գործողությունների գործընթացում: Առարկայի դասավանդման գործընթացում ուսանողը սովորում է օրենքը՝ սահմանելով դրա գործողության նոր համակարգերը և լծակները՝ համակարգելով, ընդհանրացնելով իրավական երևույթները:

6. Դասավանդման ժամանակակից մեթոդների ներդրում, ներառյալ իրավական համակարգերի տեղեկատուների հետ աշխատանքը և այլն:

Խոսելով նոր կրթական տեխնոլոգիաների մասին մանկավարժ-գիտնականները առանձնացնում են հեռավար կրթությունը որպես.

- երկխոսության ուսուցում (քեյս մեթոդ, իրավիճակային խաղ և այլն),
- ուսանողների գիտելիքների համապարփակ գնահատում (միավորային գնահատման տեխնոլոգիաներ) [3]:

Իրավագետ-գիտնականները և պրակտիկ իրավաբաններն առաջարկում են կրթական հետևյալ նորագույն տեխնոլոգիաները՝

- ցանցային տեխնոլոգիաներ, որոնք ապահովում են երկրի առաջատար բուհերի ուսանողների շրջանում ակադեմիական շարժունակություն,
- բուհի և ձեռնարկությունների միջև փոխգործակցության տեխնոլոգիա՝ բազային ամբիոնների ստեղծման միջոցով,
- էլեկտրոնային ուսուցման օգտագործում [3]:

Մեր կարծիքով, «Իրավունքի հիմունքներ» առարկայի դասավանդման գործընթացում էլեկտրոնային և հեռավար տեխնոլոգիաների ներդրումը էապես կարևոր է հայկական կրթության զարգացման ներկա փուլում:

Ներկայումս ուսումնական գործընթացի արդիականացման պայմաններում ուսանողները և դասախոսները կարող են ավելի ակտիվորեն օգտվել հեռավար տեխնոլոգիաներից, քանի որ ուսումնական հաստատությունների հիմնական խնդիրներից է ուսումնական գործընթացը հնարավորինս հետաքրքիր և մատչելի դարձնելը: Ուսանողների համար կարևոր պայման է սեփական տեմպերով սովորելու հնարավորությունը, քանի որ ոչ բոլորը կարող են ներկա գտնվել լսարանային պարապմունքներին և ուսումնական պարապմունքների ժամանակացույցը հնարավոր է ուսանողներին հարմար չլինել:

Հեռավար կրթական տեխնոլոգիաները հասկացվում են այնպիսի կրթական միջոցներ, որոնց իրականացման գործընթացը տեղի է ունենում հիմնականում տեղեկատվական և հեռահաղորդակցական ցանցերի օգտագործմամբ և ուսանողների ու դասախոսի միջև հաղորդակցությունը՝ հեռավորության վրա [2]:

Հեռավար տեխնոլոգիաների կիրառմամբ դասագործընթացի կազմակերպման համար դասախոսներին և ուսանողներին անհրաժեշտ են համակարգչից օգտվելու որոշակի գիտելիքներ և կարողություններ: Այդ կարողությունները պետք է անընդհատ կատարելագործվեն և ձևավորվեն հմտություններ, քանի որ տեխնիկական առաջընթացը կանգ չի առնում: «Իրավունքի հիմունքներ» առարկայի դասավանդման ժամանակ հեռավար տեխնոլոգիաների կիրառումը խթանում է դասախոսի մշտական ինքնազարգացումը և ինքնակրթությունը:

Էլեկտրոնային ռեսուրսների հասանելիությունը պետք է բաց լինի ուսանողների համար ցանկացած հարմար ժամանակ, այսինքն՝ դրանք պետք է բաց լինեն շուրջօրյա օգտագործման համար, և ուսանողները կարող են նաև ընտրել ուսուցման տեմպն ու տեղը, ինչը ցույց է տալիս հեռավար ուսուցման այնպիսի կարևոր հատկություններ, ինչպիսիք են՝ հասանելիությունն ու ճկունությունը:

Դասախոսը պետք է հաշվի առնի, որ յուրաքանչյուր կոնկրետ խումբ ունի ուսուցման իր տեմպը և նախնական գիտելիքների ուրույն մակարդակ, քանի որ ուսումնական հաստատություն մտնելու պահին ուսանողներն ունեն պատրաստվածության տարբեր մակարդակ, որոշակի աշխարհայացք և բարոյական արժեքներ:

Դասախոսը հնարավորություն ունի ուսանողներին բաժանել փոքր ենթախմբերի: Սա հնարավորություն է տալիս նրանց հասանելիություն ունենալ տարբեր բարդության մակարդակ-

ների ուսումնական նյութերին: Այս եղանակով յուրաքանչյուր ուսանողի համար իրականացվում է ուսուցման անհատական կենտրոնացում ուսումնական առարկայի շրջանակներում [4]:

Դասագործընթացների այնպիսի ձևեր, ինչպիսիք են դասախոսությունը, լաբորատոր և ինքնուրույն աշխատանքը, սեմինարը, կարող են իրականացվել հեռավար տեխնոլոգիաների կիրառմամբ:

Օրինակ, հեռավար տեխնոլոգիաների կիրառմամբ դասախոսությունը կարող է անցկացվել շնորհանդեսի, տեսադասախոսության, վիդեոկոնֆերանսի տեսքով:

Սեմինարը կարող է անցկացվել այնպիսի ձևերով, ինչպիսիք են՝ ֆորումի քննարկումը, տեսահամաժողովը, տեսաբանավեճը և այլն:

Խորհրդատվությունը կարող է իրականացվել անձնական հաղորդագրության, վիրտուալ սենյակի, խմբակային վիդեո խորհրդատվության և այլնի միջոցով: Հեռավար ուսուցման մեջ ինքնուրույն աշխատանքն առաջին հերթին տեղեկատվական համակարգերի, էլեկտրոնային ուսումնամեթոդական համալիրների հետ աշխատանքն է տեղեկատվության որոնումներ իրականացնելու նպատակով և այլն:

Արդյունավետ ենք համարում հեռավար ուսուցման տեխնոլոգիաների ակտիվ գործածումը. ավանդական դասախոսությունների և գործնական պարապմունքների փոխարեն ապահովվում է ուսանողներին ուսումնական և մեթոդական նյութերի հասանելիություն, իսկ ուսանողներն ու դասախոսները միմյանց հետ շփվում են տեղեկատվական և հեռահաղորդակցության ցանցերի միջոցով:

Ուսուցման այս ձևն անհերքելի առավելություն ունի հաշմանդամություն ունեցող ուսանողների համար, ովքեր ցանկանում են կրթություն ստանալ՝ չհեռանալով իրենց աշխատավայրից կամ բնակության վայրից: Դասագործընթացի ժամանակացույցը ներառում է տարեկան ընդամենը երկու հանդիպում՝ քննություններ և թեստեր հանձնելու համար: Ուստի ուսանողը ողջ ուսումնական գործընթացում կարիք ունի դասախոսի հետ շփման և ուսումնական ու մեթոդական նյութերի բաց հասանելիության:

Հեռավար կրթության պարագայում անհրաժեշտ է.

- էլեկտրոնային կրթական ռեսուրսների տվյալների բազայի ստեղծում,
- էլեկտրոնային կրթական միջավայրի կամ հարթակի կառավարում,
- հեռավար ուսուցման տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող կրթական ծրագրերի աջակցություն,
- ուսուցման բոլոր ձևերում էլեկտրոնային ուսուցման, հեռավար ուսուցման տեխնոլոգիաների ներդրում:

Կրթության մեջ ընթացող մուլտիմեդիա գործընթացների հետ կապված՝ ուսանողները և դասախոսները հնարավորություն ունեն համակարգիչը վերածել շատ մեծ ծավալների տվյալների բազաների հետ աշխատելու հարմար գործիքի, որը պարունակում է ոչ միայն տեքստային ֆայլեր, այլև ձայնային, բարձրորակ պատկերներ և տեսանյութեր:

Մուլտիմեդիա համակարգերը թույլ են տալիս ներդաշնակեցնել դասախոսությունն ուսումնական նյութի ցուցադրման, համակարգչային սիմուլյատորի տեսքով սեմինարի, թեստավոր-

ման համակարգի և բոլոր լրացուցիչ նյութերի հետ մեկ ինտերակտիվ համակարգչային դասագրքի:

Տեխնիկական միջոցների էվոլյուցիան և նոր տեխնիկական միջոցները հնարավորություն են տալիս էապես փոխել տեղեկատվության հետ աշխատանքը: Ժամանակակից ուսանողը գործնականում չի այցելում գրադարան, բավականին հազվադեպ է դասախոսություններ գրում, այնուամենայնիվ, ձեռք է բերում անհրաժեշտ գիտելիքներ: Ուսանողը կարողանում է էլեկտրոնային տարբերակով գտնել անհրաժեշտ ուսումնական նյութը, նրան հասանելի են տարբեր էլեկտրոնային գրադարաններ, որտեղ կարող է գտնել անհրաժեշտ գիրքը, նկարել էջը և կարդալ այն տանը: Այս ամենը դարձնում է ուսուցման գործընթացը մատչելի և հարմար, իսկ ուսանողը գնալով ավելի քիչ ժամանակ է ծախսում անհրաժեշտ տեղեկատվության և ուսումնական նյութի որոնման վրա:

Այժմ իրողություններն այնպիսին են, որ ժամանակակից կապի համակարգերի և վիրտուալ իրականության տեխնոլոգիաների ներդրումը թույլ է տալիս ակտիվ զարգացնել ինչպես ավանդական, այնպես էլ հեռավար կրթությունը՝ դրանք հասցնելով որակապես նոր փուլ:

Ուսուցման գործընթացն առավել արդյունավետ և հետաքրքիր դարձնելու համար մենք ուսումնական գործընթաց ենք ներ մուծում նոր կրթական տեխնոլոգիաներ: Ուսումնական նյութը ներկայացվում է համապարփակ ձևով, որպեսզի ուսանողը կարողանա արագ հասկանալ ուսումնական գործընթացի կազմակերպման ընդհանուր սկզբունքները հեռավար տեխնոլոգիաների կիրառմամբ՝ հաշվի առնելով կարգավորող, կազմակերպչական և մանկավարժական ասպեկտները:

«Իրավունքի հիմունքներ» առարկայի դասավանդման ուղղությամբ ուսումնական գործընթացը կազմակերպելիս մեր կողմից կիրառվում են նաև այնպիսի նորարարական տեխնոլոգիաներ, ինչպիսիք են՝

- հանդիպումները պրակտիկ մասնագետների հետ, օրինակ՝ իրավապահ մարմինների, պետական մարմինների ներկայացուցիչների և այլն,
- դերային խաղերը (տարբեր կրթական գործընթացներ քաղաքացիական իրավունքի, ընտանեկան իրավունքի, բիզնեսի իրավունքի, մասնավոր միջազգային իրավունքի ոլորտում),
- ոլորտի մասնագետների վարպետության դասերը,
- բանավեճեր կյանքի տարբեր ոլորտներից՝ իրավիրելով գործող փաստաբանների,
- բիզնես հաղորդակցության դասընթացները,
- առցանց կոնֆերանսները:

Հեռավար ուսուցման պարագայում մեր կարծիքով լայն կիրառություն կարող են ստանալ՝ պրոբլեմային ուսուցման, նախագծային, մոդուլային, թղթապանակի, քննադատական մտածողության զարգացման, համագործակցային ուսուցման տեխնոլոգիաները:

Ուսուցման գործընթացն արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է կրթության ավանդական մեթոդների մեջ ներառել ժամանակակից տեխնիկական միջոցներ և տեխնոլոգիաներ, ինչպես նաև ամենուր օգտագործել էլեկտրոնային տեղեկատվական համակարգեր:

«Իրավունքի հիմունքներ» առարկայի դասավանդման ժամանակակից պահանջները ներառում են նաև տեսական նյութերի պարտադիր լրացումը գործնական օրինակներով: Նորարարական է նաև այն, որ ուսանողներն ավելի շատ ժամանակ են տրամադրում իրավական տեղեկատվության որոնման և դրա համապարփակ վերլուծության վրա, ինքնուրույն աշխատանքին: Ուսանողները պետք է ընկալեն ուսումնական նյութի բովանդակությունը կամ դասախոսի խոսքը, բայց ակտիվորեն արտհայտեն իրենց մտքերն օգտագործելով անհրաժեշտ գիտական տեղեկատվությունը:

